

Hentchak :

Organe Central
DU PARTI

HENTCHAKISTE

Հ Ն Չ Ա Կ

Journal Arménien

mensuel

XX Année

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀԱՐԿԱՆՈՐ Է ՍԹՆՓՈՒԻԼ

Հայրենիքէն եկած նամակները՝ մէկը միւսէն աւելի սրտաճմլիկ, մէկը միւսէն աւելի սարսեցեցուցիչ են: Բռնապետութիւն մը ի՞նչ կրնայ խորհիլ ժողովուրդ մը ջնջելու, որ առաջ երկիր մը աւերելու համար, — այդ ամէնը կը կատարուի արագ և մեծ ծաւալով: Այլևս՝ տառապանքի, չարչարանքի բանտի, արքայանքի մասին չէ խօսքս, և ո՛չ ալ հարկահաւաքներու խտուրթիւններու մասին. այլ աւոր մասին է, որ ճաճիկ կառավարութիւնը, բառի բուն նշանակութեամբ՝ իր պաշտօնեաներու միջոցով, կը դատարկէ երկիրը հայերէ, անոնց տեղը միւսլիմաններ բնակեցնելու համար, և հազար ու մի նեղութիւններով ներս մտած հայերն ալ դուրս կը վտարէ:

Թէ քրքի թա պ ա ա ընտղներու թիւը կարծուածէն աւելի ահագին չափեր կատանայ հետզհետէ, որ յայտնի ապացոյց է վտանգի խորութեանը:

Ահա, աղեխարշ նամակի մը կտորը:
 "Անշուշտ հասկնալ կուզես ժողովրդին արամադրութիւնը, կը ցաւիմ բնելու՝ որ շատ ինկած, յուսահատ վիճակ մը կը ներկայացնէ, մինչև որ գորատը հակադեցութիւն մը չըլլայ, որ և է բան սպասելը՝ սխալ մը պիտի ըլլար, գէթ այստեղի համար, ես այսպէս կը տեսնեմ: Գաղթելու գաղափարը շատ մեծ հոսանք մ'առնել սկսած է և շատ տեղերէ ալ՝ շատեր արդէն գաղթած են, ահա՛ խոշոր վտանգ մըն ալ. ի՞նչպէս առնել սակայն ասոր առաջը, երբ ժողովուրդը բոլորովին արգահատելի վիճակի մը հասած է. գաղթողներ ի՞նչ կը մտածեն, դիտէք. — այժմու վիճակնուս ալ գէշ վիճակ մը չենք ունենար ես՝. գէթ պատուի ու կեանքի ապահովութիւնը կու՛նենանք. — կըսեն":

Թիւրք կառավարութիւնը, մեզ բնաջնջելու ծրարակիրը՝ ակնյայտնի կերպով կը գործադրէ:

Ի՞նչ ընենք ուրեմն:
 Բողոքէ՛նք եւրոպական պետութիւններուն, — միթիւնկնէ՛ր ընենք, աղերսագրերով դիմէ՛նք դեսպաններուն, պետութեանց ներկայացուցիչներուն. չը հասկըցնէ՛նք անոնց մեր ցաւերը, թուրքին մեզի դէմ ի դործ դրած բարբարոսութիւնները և անոր յրացած զոխապին ծրագիրը:

Անշուշտ՝ բողոքը յատուկ է ամէն զրկուածի, ամէն տկարի, բայց խնդիրը այն է՝ թէ եւրոպական պետութիւնները, որոնց որ պիտի բողոքենք, — անոնք շատ լաւ գիտեն, որ թիւրքը կուզէ Հայաստանը ու-

նենալ, առանց Հայու: Անոնք՝ ոչ միայն պաշտ գիտեն, այլ այդ ծրագրի գործադրութեան փաստերը արձանագրած ու մատնանշած են իրենց մատուցած պաշտօնական գեկուցագրերուն մէջ: Դեռ աւելին կըսեմ, անոնք ոչ միայն պաշտ գիտեն, այլ անոնց մէջ կան այնպիսիները, որոնք չէ թէ թուրքին հարկործան քաղաքականութեան անտարբեր աչքով կը դիտեն, չէ թէ կը թողուն որ ինչոր ուզէ ընէ, այլ իրենք ի՛սկ կը դրդեն պաշտ ընել և կընկերանան անոր, — ի հարկէ իրենց հեռաւոր շահու տեսակէտով:

Բողոքէ՛նք, արդարութիւն աղաղակենք, — բայց արդարութիւնը, ճշմարտութիւնը այս աշխարհին մէջ՝ իր զլխուն թողուցած, գոյութիւն չունի, անիկայ գոնէ հիմա չը գտնուի կառավարութեանց նժարին մէջ:

Մեր ծով ցաւերուն, մեր անհաստուն տառապանքին դարձան, արդարութիւն, ճշմարտութիւն կուզէ՛նք փնտռել, կուզէ՛նք չը կոտորուիլ, չը մորթուիլ, կուզէ՛նք ապրիլ, մեր իրաւանց, մեր կենաց և մեր հայրենեաց տէրը դառնա՛լ, — այդ բոլորը փնտռենք մեր սուրի ծայրը, մեր ատրաշէկ գնդակին մէջ: Ամէն ինչ կեղրոնացած պէտք է տեսնենք հայ կրտրիճի բաղուէկին մէջ:

Ուրիշներուն դուռը բաղխելով չէ, որ արդարութեան դուռը պիտի բացուի մեր առաջ, ուրիշներուն աղաչելով, պաղատելով, արգահատանք մուրալով չէ, որ մենք Հայաստանը պիտի ազատենք, — ո՛չ, այլ յեղափոխական կռիւ մղելով:

Լա՛նք, աղաչէ՛նք, պաղատի՛նք, որ եւրոպական պետութիւնները իրենց գանձը բանան, իրենց զօրքերը շարժականութեան մէջ դնեն, սուր հանեն, թուրքին վրայ վազեն մեզ փրկելու համար, — երբ մենք ինքներս նախ մեր քսակի բերանը չենք բանար, երբ ամենէն առաջ հայ կտրիճը առաջ չը նետուիլ և իր կեանքը զոհաբերութեան չը պատրաստեր:

Կրնէ՛նք մենք այն, ինչոր ուրիշներէն կը պահանջենք, որ անոնք մեզի համար ընեն:

Եթէ ուրիշ ազգերու կեանքէն չենք խրատուիր, գոնէ մեր անցեալ պատմութենէն խրատուիր:

Մեր հայրերը շատ էին լացեր, շատ էին աղաղակեր, եւրոպական պետութեանց ներկայացուցիչներուն դռները շատ էին բաղխել, բայց այդ բոլորի հետեանքը ի՞նչ էր եղած: Փոխուցա՛ւ անց-

եալի դրութիւնը, — բնաւ երբէք, մազի չափ անգամ չը փոխուեցաւ:

Երբ ժամանակակից ըմբոստ Հայ երիտասարդութիւնը յեղափոխական ասպարէզը մտաւ, երբ Հայ ժողովրդի յառաջամարտ մասը Հրացանը գրկեց — միայն այն ժամանակն էր, որ Եւրոպան Հետաքրքրուեցաւ, գիտցաւ թէ ուայեաներ կան, որոնք կուզեն ազատ ապրիլ, և, ատոր Համար ալ, արեան գետակներ կը հոսեցնեն:

Եւրոպան տեսաւ մեր արիւնը, զուլայ, անմեղ, ազատութեան նուիրուած մարտը արիւնը, — նա չը կարծեցաւ. նախ աչքը դարձուց դէպի իր շահը, և իր շահու տեսակէտները սկսաւ մատնելուն վրայ Հաշուել:

Ոյժ ունէր հայը, որ մինչև վերջը իր Դատը առաջ մղէր, կէս ճամբան չէր մնար, արժէր անոր համար իր շահերը վտանգել. — այս եղաւ մեր սրտացաւ օտար բարեկամներու մտմտուքը:

Հարիւր հազարներու արեան առաջ՝ Եւրոպան առ առաւելն կարեկցեց և միայն այդքան, այդ կարեկցութիւնն ալ երթարով մարեցաւ. այսօր նա միայն ինքն իրմով կըբաղի, և Հայաստանի մէջ անցած դարձածը, Հայ ժողովրդի կրածը, անոր ուշադրութիւնն անգամ չի գրաւեր:

Այս ամենէն ետքը ի՞նչ ընել:

Ամէն բանէ առաջ, մենք մեզի Հաւատարիմ մնա՛նք, մենք մեր պատմութեան շարունակութիւնը կազմենք, մեր քաջարի նահատակներու հարազատ ժառանգը և յաջորդները լինենք:

Այս սև օրերը, որ մենք կանցունենք, մեր նախահայրերը շատ են տեսած անցեալ դարերու մէջ. բայց անոնք ո՛չ վհատուած են և ո՛չ ալ յուսահատուած. անոնք կուր յամառօրէն մղած ու կուրծք տուած են ժամանակի խիտ հարուածներուն, առանց վարանուծի և առանց յուսահատութեան. մինչև որ սև օրերն անցած են, ինչպէս գարնան հեղեղ:

Հայ ժողովուրդը այս տառապանքի օրերուն մէջ, թող ինքն իր գծած յեղափոխական շաղիկն հետևող մնայ, թող կուրծք տայ, թող չվհատի, մինչև որ այս սև օրերն ալ անցնին, և պիտի անցնին:

Չկա՛յ, չկա՛յ փրկութիւն ուրիշէն, մեր փրկութիւնը ո՛չ միայն մենք մենէ պիտի յուսանք, այլ Համոզուած պիտի լինինք, որ մենք մեզ փրկելու ոյժը, զօրութիւնը ունինք: Ահա՛ ինքնավստահութիւնը, ահա՛ համոզումը, որ մեր ամենօրեայ կեանքի մտածումը պիտի կազմէ:

Եթէ մենք զմեզ փրկելու, մենք զմեզ ազատելու ճարը, միջոցը, ոյժը ունինք, հապա ինչո՞ւ չենք ազատուիր, ուրեմն:

Ինչո՞ւ, — որովհետև մենք չենք կրնար մեր բոլոր ոյժը երևան դնել, կազմակերպել, ներդաշնակել և պարտականութեան դաշտը հանել:

Ինչէ՛ր չէր ընէր Հայ ժողովուրդը, եթէ միա-

համուռ աշխատէր, համերաշխ գործէր և առիթէն օգտուիլ գիտնար, միթէ՞ թիրք պետութեան այս ինկած ու մնանկացած օրերուն մէջ՝ մենք չը պիտի կրնայինք մի վարպետ հարուածով մեր ազատութիւնը խլել:

— Մենք այդ կարող էինք և կարող ենք ընել, եթէ մեր մէջ համերաշխութիւնը, միութիւնը և պարտաճանաչութիւնը ա ի ի է:

Այն օրը՝ երբ ճշմարտապէս ամենուս նշանաբանը կը լինի՝ «ամէնը մէկի և մէկը ամենուն համար», — այդ օրը մենք փրկուած ենք:

Ձանա՛նք այդ օրը բերել, և ապա ժամանակը հրամայական կը դարձունէ, թէ ի՛նչ պէտք է ընենք:

ՄՈՒՐԱՏ

ՍՕՅԻՆԼԵԶՄ ԵՒ ԱԶԳՈՒԹԻՒՆ

Սօցիալիզմի և ազգութեան յարաբերութեան նկատմամբ մեր մէջ երկու ծայրայեղ կարծիքներ կան, կարծիքներ՝ որոնք ո՛չ միայն յաճախ առիթ են տալիս ոչ-ցանկալի երեւոյթների, այլև պատճառ են դառնում մի կարգ այնպիսի հետեւանք յառաջացնող անհեթեթ թիրիմացութիւնների, որոնք ջրատու են, մեծապէս, հասարակական շատ գործեր:

Մեր թունդ պահպանողական, բայցի Հայ ազգայնական կեանքից՝ ուրիշ և ո՛չ մի բանով հետաքրքրուող Հայ մարդը երկաթի այն համոզումն ունի՝ թէ սօցիալիզմը ուղղակի և անմիջական նպատակ ունի աղքատիւները ջնջել և, հետևաբար այդպիսու կարծիքով, լինել սօցիալիստ, նախ ասել է լինել մի բան, որ ինչոր է, բայց ամէնից առաջ Հայ չէ: Եթէ հայ՝ ապա ոչ-սօցիալիստ, իսկ եթէ սօցիալիստ՝ ապա ոչ-հայ — ահա դրանց համոզման շէնքը:

Այս կարգի մտածողների մէջ չենք ասում թէ անկեղծ, անձնուէր սրտեր և հասարակական գործերի բարգաւաճմանը նախանձախնդիրներ չկան, մանաւանդ Հայ յեղափոխական գործի յաջողութեանը, — ոչ, ընդհակառակը, մենք դրանց մէջ տեսած ենք շատ լաւ տրամադրութիւններ, պէտքական ոյժեր ի՛սկ, որոնք իրաւջնէ օգտակար կարող էին լինել, եթէ մտքի, մտածունքի մի փքը ընդդաշնութիւն ձեռք բերէին, եթէ մի քիչ աւելի ընթացիկ տեղեկութիւններ ունենային ժամանակակից գաղափարներից և քաղաքակրթութեան հոսանքներից, — դրանց գլխաւոր պակասութիւնն այն է, որ ժամանակից յետ են մնացել և ներկայի վրայ դիտում են անցեալ կեանքի գունաւորուած ակնոցներով:

Մանկութիւնից ի վեր մեծացած միմիայն Հայ կեանքով, դաստիարակուած իր պապի և ծածի խրատներով, կրթուած պատմական վարժապետի դասերով, սնուած մեր գասական և նորագոյն գրականութեան անձուկ շրջանակով, գիտութեան տարրերի հետ հաղիւ ծանօթ, ընկերային և պատմական ընդհանուր գիտութիւններից համարեա թէ զուրկ, ուրիշ ազգերին և ժողովրդներին ճանկութիւնից ի վեր խորթ և թշնամի աչքով դիտելու սովոր, ճնունդ զուտ ազգայնական միջավայրի — այդպիսին, իրերի բնական բերձունքով, ըմբոստ ամէն նորութեան՝ ինչոր չի համապատասխանում իր արդէն ունեցածին, ճիւղ է անում շարունակել մնալու առաջուան նեղ, նախապաշարուած, նորը մարտելու անընդունակ ուղեղը, եթէ նոյն իսկ փոխադրուած է մի այլ միջավայրի մէջ, ուր կեանքի պայմանները բոլորովին փոխուած են և ամէն բոլոր հարաւածում են իր հասարակագիտական շէնքի սիւները:

Յաջողութեամբ է նա իր այդ ձգտումն ձեռք, — ո՛չ ճիշտ:

Որքան որ վճռապահն, հօրենական և ճօրենական աւանդութեանց կառնող, ճիշտ կատակածոտ, այնուամենայնիւ զայն է ճիշտ պէտք, երբ նա այլևս չգիտնար իր ճիշտակարար արարչներն սկսում է տատանուել, խարխալուել. նա ջանք է անում իրեն յարմար ճիշտակարար ստեղծել և այնտեղ փոխադրել իր արդէն ունեցածը և շարունակել իր առաջուան կեանքը, այն կեանքը որ իրեն տուել էր պապենական օջախը, վարժապետը, տէրտէրը, շուկայի ժխտը, — բայց այդ նրան մինչև վերջ չի յաջողում. խորթ բեկոր նոր կեանքի յորձանքն ձեռք, նա՛ այդ ազգայնաճողը յանկարծ դարկուում է իր չտեսած խռթներին և հայ քրիստոնեան, բայց հայից և հայութիւնից ամէն ինչի վրայ խորթ նայողը ինքն է՝ որ ընկնում, խորթանում է և թունդ ազգայնաճող լինելուց՝ թունդ հակազգայնական է դառնում — այսինքն ճիշտ, որ ամէն ինչ է, բայց հայ չէ:

Եւրոպական, Ամերիկեան և այլ բուրժուազական ազատ մշակակարգի ձեռք ապրող խտտապահանջ հայ ազգայնաճողի կեանքը յաճախ վերջանում է ողբերգական կերպով՝ ազգային տեսակէտից. նա ուզում է ապրել, շնչել որպէս հայ, բայց դալիս է ճիշտ, իր կամքին հակառակ, երբ նա ապրում, շնչում, ծեռնում է որպէս ոչ հայ: Երևոյթը հասկանալի է և դիւրաւ բացատրելի:

Ահա՛ այս տիպերիցն է յաճախ, որ անհաշտ ասելութիւն է ուղղում դէպի սօցիալիզմը, ոչ թէ նրա գաղափարային, սկզբունքային խնդիրների մասին, — ո՛չ, չէ որ լսել են թէ սօցիալիզմը քարոզում է հաւասարութիւն, առանց ցեղի, կրօնի, լեզուի և ազգի խտրութեան և ահա այդ ձեռք սկզբունքը մարտնչելով չկարողանալով, կամ աւելի ուղիղն ասած՝ չաշխատելով թափանցել նրա էութեան և ոգու ձեռք, գալիս են այն կոպիտ եզրակացութեան, թէ քանի որ սօցիալիզմը ազգերի հաւասարութիւն է քարոզում, կնշանակի թէ նա հային ասում է լինել ուս, թուրք, քուրդ... և դա աւելի ծոծում է ինքնապահպանութեան բնազդը, գնցում է կարծիր ազգայնաճողութիւնը և առաջդ տեսնում ես մարդիկ, որոնք հակառակ իրենց է՛ն կենսական և է՛ն բարձր շահերին, սկսում են պոռալ, ճչալ որ սօցիալիզմը տնաքանդութիւն է, համազօր ազգութեան, դաւաճանութեան, և այդ բոլորը նրա համար, որ սօցիալիզմի ձեռք ազգերի, ցեղերի, լեզուների հաւասարութեան սկզբունք կայ:

Նախապաշարունակ այնքան արձաններ է արձակել, հինը այնքան կաշկանդել է այդպիսիներին, որ երբ համոզեցուցիչ փաստերի առաջ տեղի են տալիս ու այլևս անկարելի է հակառակել — դարձեալ մտքերի ձեռք մնում է ճիշտ կատակած, ճիշտ անվստահութեան գիծ: Մարդը իրեն ասած յաճանքներին նայելով՝ անձնատուր է լինում, բայց ճիշտ այն վերապահութեամբ, թէ իրեն խաբում են, խաբում են՝ որպէսզի հայ լինելուց դադարեցնեն:

Անշուշտ, իր գործադրութեան համար, ամէն նոր գաղափար նոր սերունդ էլ կպահանջի. հասկանալի է թէ Յիսուսը ինչո՛ւ համար, իր մտքերի մարմնացմանը տեսակէտից, աւելի նախապատուութիւն էր տալիս մանուկներին, քան Մարտկեցիներին և Փարիսեցիներին՝ իր ժամանակի այդ անուղղայ ազգայնաճողներին, որոնք մանուկներից շատ բարձր էին իրենց մտաւոր կարողութիւններով, բայց հենց խնդիրն էլ այն է, թէ այդ մտաւոր կարողութիւնները ի՛նչ հիմունքների վրայ էին կեցած և դէպի ո՛ր կողմը հակած:

Մենք այդ թունդ պահպանողականներին է որ ուղղում ենք մեր խօսքը և ասում՝ որ սխալ է ձեր հայեցակէտը, սխալ է ձեր եզրակացութիւնը. կարելի է լինել և՛ սօցիալիստ և՛ հայ, սօցիալիստ դառնալը նախապայման չէ՝ ազգը կորցնելուն, սօցիալիզմը չի ասում որ հայը անպատճառ իր ազգութիւնը պիտի կորցնի և երթայ դառնայ թուրք, քուրդ,

ուսու... այդպիսի բան չկայ: Եթէ հայը ուզում է պահել իր ազգութիւնը, ցանկանում է մնալ հայ, սօցիալիզմը ո՛չ միայն դրան արգելք և հակառակող չէ, այլ իրեն տալիս է անկաշկանդ, ամէն տեսակ սեղմումներից ազատ պայմաններ՝ հայ մնալու: Սօցիալիզմը այնպիսի մի տարրալուծիչ ոյժ չունի իր ձեռք՝ որ հայը թուրք դարձնի, թուրքը՝ հայ, ճիշտ, մի լեզու, ուրիշ մի ցեղի, ուրիշ մի լեզուի ձևափոխի, — ո՛չ այդպիսի նպատակ, ո՛չ էլ այդպիսի մի ճիշտ ունի սօցիալիզմը. այդ մտածմունքները կարող են յարմարել բուն պետական գաղափարների պաշտպաններին, նրանք են այդ տեսակ ձգտումներ ունեցել, սօցիալիզմը ցեղային ձևափոխութիւններից, լեզուական խնդիրներից բարձր է. նա ձգտում է ո՛չ միայն անհատը ազատել ամէն տեսակ նիւթական և բարոյական կաշկանդումներից, այլև հաւաքական մարմինները՝ ազգութիւնները. և այդ ազատ ազգերին եղբայրաբար, հաւասար պայմաններով և իրարու նկատմամբ իրարու հետ կապելով՝ հաւաքական ազգանահաններից կազմել ընդհանուր մարդկութիւնը, որի ձեռք ազգային ամէն միութիւն ազատ է իր գոյութիւնը, իր անհատականութիւնը պահպանելու, եթէ ցանկանում է, և պահպանելու սեպհական պայմաններ և ոյժ ունի:

Արդ, հայ մնալու ցանկութեամբ, իր ազգութիւնը չկորցնելու երկիւղով սօցիալիզմին հակառակելը ոչ միայն անտեղիութիւն է, այլև սխալ և հետևանք տգիտութեան:

Հազարաւոր հայ անհատներ՝ բուրժուա, պետական պաշտօնեայ, գործաւոր... իրենց ազգութիւնը կորցնում, նրանից հրաժարում են՝ առանց սօցիալիստ լինելու: Ահազին հայ գաղութներ են անհետացել, որպէս հայ ազգութեան անդամներ, առանց կասկածելու անգամ սօցիալիզմի գոյութեան մասին: Ուրեմն ազգութիւն կորցնել կամ չկորցնելը սօցիալիզմի հետ ուղղակի կապ չունի: Թողրի էութեան հետ ծանօթանալու համար, հարկաւոր է ուսումնասիրել այն և ոչ թէ առանց իրականութեան վերահասու լինելու, ի գուր տեղը մտքերի ձեռք անտեղի շփոթութիւններ յառաջացնել և տգիտութիւնը շահագործելով՝ շահագործողին իր ի՛սկ շահի դէմ կուռելու շաղի ձեռք դնել:

Անցնենք միւսին:

Մեր ձեռք կայ մի ուրիշ խառ էլ, որ դարձեալ արտացոլացնում է այն կարծիքը թէ սօցիալիստ լինելու նախապայմանն է հայ ազգութիւն չընդունել. դրանց համոզմունքով միջազգայնականութիւն և ազգութիւն տրամագծօրէն իրարու ջնջող գաղափարներ են՝ ու անաղարտ սօցիալիստ նկատուելու համար՝ նրանք ամենայն փութկոտութեամբ հեռանում, խորշում են այն բոլորից, ինչոր հայ և հայկական է:

Եւ այդ շատ հասկանալի է, այնպէս չէր էլ կարող լինել, աչքի առաջ ունենալով այն միջավայրը, որ արտադրել է այդ տարրը և նրան գոյութեան իրաւունք տուել:

Հայ ժողովրդի ցրուած, վայրվատին վիճակը թոյլ չի տուել որ հոգեկան և բարոյական միութեան աւելի գորեղ կապեր ստեղծուէին հայ ազգը կազմող տարրերի միջև: Անշուշտ դասակարգային խտրականութիւնը այդտեղ որոշ դեր ունի՝ որպէս անջատող ոյժ, բայց ամէն ինչ միայն դրանով չի բացատրում ձեզ հետաքրքրող այս խնդրի ձեռք: Այդտեղ մի այլ պատճառ էլ կայ, այն է՝ կրթութիւնը, գաստիարակութիւնը, մի խօսքով՝ միջավայրը, անհատը կազմող բարոյական ազգակները: Մի նուաճուած ժողովուրդ, որքան էլ որ իր ծոցի ձեռք ունենայ դասակարգեր, այնուամենայնիւ այդ դասակարգերից իւրաքանչիւրը ունի իրաւունքներ՝ ժառանգութիւններ, որ հանրական են, օրինակ՝ լեզու, գրականութիւն, պատմական անցեալ, սովորութիւններ, ազգային անհատական գոյութեան իրաւունք, և այլն:

Արդ, նուաճուած ժողովրդների ճեջ՝ աւելի քան յաճախ՝ այդ հանրական կապերը խզուելու վտանգի ճեջ են: Հայ հօրից և ծօրից ծնած դաւաններ պիտի շարունակէին հայ ազգութեան անդամ մնալ՝ եթէ նորմալ վիճակ լինէր, եթէ եկող սերունդները ճիշտ ունենային ճի ազգի հանրական իրաւունքներին տիրանալու, բայց այդպէս չի լինում, կեանքը բոլորովին այլ հիմունքներ է ստեղծել, — այն՝ որ՝ հայ ազգից ծնուած, յառաջանում են սերունդներ, բայց նրանք առաջին օրից ի՛սկ շրջապատուած են ապազգայնացնող ճիշտ վայր ու վայրէջքով՝ լեզուն ուսուցելով, սովորութիւնը ուսուսանելով, կրթութիւնը, դաստիարակութիւնը ուսուսանելով, մեծացած ուսուսանողներն յիշատակներով, բոլորովին խորթ հայ լեզուին, հայ գրականութեան, հայ պատմութեան, այդպիսին հոգեպէս աճում, մեծանում է որպէս ոչ-հայ, և երբ գալիս է գործնական կեանքը, գործի ասպարէզը՝ աւելի քան բնական է, որ այդպիսին սօցիալիստ դաւանաւոր՝ նշանակեցի չտի անդամ հոգ չանէր ազգային իրաւունքն երիտիրանալու և ի՛նչ իրաւունքներ, քանի որ ճիշտապէս նպատից արդէն այդ իրաւունքները ջնջել, խլել է, և հայ այդպիսին, որ առանց սօցիալիստ լինելու էլ արդէն ոչ-հայ էր, երբ սօցիալիզմ և ապազգայնացում համազօր է նկատուած, նա ինքն իրեն հաւատարիմ է մնում, և զարմանալի էլ պիտի լինէր այդպիսուց պահանջել ազգային իրաւունքների գաղափար:

Իստի՛ր նրա հետ Սասունի, Վասպուրականի, Տարնի . . . ճախին, նա կա՛մ քեզ չի հասկանալ, կա՛մ քեզ կընկատի թունդ նացիօնալիստ, թէև ասածիդ ճեջ նացիօնալիստական ոչինչ չլինէր, այլ ճի ժողովրդի գոյութեան անձեռնմխելի իրաւունքի: Եւ անբնական էլ չէր լինիլ, եթէ նա քեզ հասկանար, քանի որ նրան բացարձակապէս ոչինչ չի կապում այդ վայրերի հետ. ի՛նչ յիշատակ, ի՛նչ ձգտում, ի՛նչ շահ խաղի ճեջ պիտի ծանր ու նրան կրակի ճեզ . . .

Այս տիպերից ճեք ճեջ աւելի քան շատ կան, որոնք իրենց հոգեկան վիճակը աշխատելով ուրիշի վրան անցնել, աւելի վնասուած են սօցիալիստական պրօպագանդայի և յառաջադիմութեան գործին, քան օգտակար լինում:

Ռուս բելուկրատիայի ճի դարու աշխատանքը բոլորովին ի գուրը չի անցել: — Իրականութիւնը այնտեղ է: Պէտք է նզովք կարգաւ սօցիալիզմին, երբ այդպիսիներից հեգնանք է լսուած դէպի Հայաստան և Հայկական Ինդիա անունները:

Արդ, այդ երկու ճայրացող տիպերի ասածների և խօսածների ճեջ չէ, որ պէտք է փնտռել սօցիալիզմի յարաբերութեան խնդիրը դէպի ազգութիւնը:

Պարզեմք ինդիւրը համառօտակի:

Աճէն ազգ իր ճեջ ունի երկու դասակարգեր՝ աշխատողներ և չաշխատողներ, շահագործողներ և շահագործուողներ, տիրողներ և տիրուողներ: Դասակարգերի գոյութիւնը և դասակարգային կռիւը, իր բոլոր յատկանշող կողմերով, աւելի ցայտուն կերպով երևան է գալիս կապիտալիստական կողմ ունեցող ընկերութեան ճեջ. այստեղ պրոլետար (գործաւոր) և կապիտալիստ առաջին հանդիպումից ի՛սկ իրարու առաջ են կանգնում որպէս հակաշահներ և հակառակորդներ: Ինչպէս ամէն ազգի, նոյնպէս էլ հայ ազգի ճեջ գործաւոր ճասը անանձին ճի դասակարգ է կազմուած, կապիտալիստը՝ առանձին: Այդ երկու դասակարգերը իրարու հակառակորդներ են և ունին շահերի հակամարտութիւն:

Արդ, հայ գործաւոր դասակարգը, իր դասակարգային շահի տեսակէտից, աւելի ճօտիկ է ուսու, լեհ, վրացի գործաւոր դասակարգին, քան հայ կապիտալիստ դասակարգին: Հայ, ուսու, լեհ, վրացի գործաւոր դասակարգերը, իրենց դասակարգային շահերի տեսակէտից՝ կազմուած են ճի միութիւն, ճի ամբողջութիւն, բաժանուած իրարուց ազգային կապերով (լեզու

ով, պատմութեամբ, սովորութիւններով, և այլն). ազգային պատմեղծներից բարձր կանգնելով՝ նրանք եղբայրներ, նոյնութիւններ են, որովհետև բոլորն էլ արտադրող, շահագործուողներ են, այսինքն հարստութիւն ստեղծող, բայց չվայելողներ:

Դրա հակառակ՝ հայ կապիտալիստ դասակարգը՝ իր դասակարգային շահերի տեսակէտից, աւելի ճօտիկ է ուսու, վրացի, լեհ կապիտալիստներին. նա նրանց հետ է եղբայրութիւն, միութիւն կազմուած և միւսներից բաժանուած է միայն լեզուով, պատմական անցեալով, և այլն. ուրիշ խօսքով՝ ազգային պատմեղծներից վեր բարձրանալով՝ նա շահակից եղբայր է միւս ազգերի կապիտալիստներին, որովհետև բոլորն էլ միևնոյն շահագործող ընտանիքի գաւակներն են:

Այս տեսակէտով է, որ աւուած է թէ բոլոր ազգերի պրոլետարները կազմուած են ճի ազգութիւն, կապիտալիստները՝ ճի ուրիշ, այս բացատրութեամբ է, որ աւուած է թէ բոլոր ազգերի պրոլետարները եղբայրներ են և պէտք է որ միանան, իրարու ձեռք տան միւսների՝ կապիտալիստների դէմ:

Ուրեմն, որպէս դասակարգ, հայ գործաւոր դասակարգը աւելի ճօտիկ է ուսու, վրացի, լեհ գործաւոր դասակարգին, քան թէ իր սեպհական ազգի կապիտալիստ դասակարգին: Նոյնը և՛ միւս ազգերի գործաւորների նկատմամբ:

Արդ, ամէն ազգի գործաւոր դասակարգ անմիջական կռուի ճեջ է իր ազգի կապիտալիստ դասակարգի հետ և նպատակ ունի ջնջել դասակարգային հակամարտութիւնը, ինչոր կարելի պիտի լինի միայն սօցիալիզմի տիրապետութեամբ: Սօցիալիստական սկզբունքների կիրառութեամբ՝ դասակարգային կռիւը աւարտ կգանի, բայց դրանով ո՛չ հայ գործաւորը անմիջապէս կկերպարանափոխուի, կդաճայ լեհ, ուսու, վրացի . . . և ո՛չ էլ հայ կապիտալիստը: Նրանք դարձեալ կշարունակեն մնալ նոյն ազգութեան անդամները, որոնք երէկ հակաշահ էին, բայց այսօր՝ ոչ:

Երբ սօցիալիզմի քաղաքական և տնտեսական ճրագիրը կիրադորուի, այն ժամանակ բոլոր ազգերի միջից կջնջուեն դասակարգային հակամարտութիւնները և ամէնքն էլ կլինին հաւասար, համիրաւունք հարազատ եղբայրներ, — ո՛չ մէկը իշխող և ո՛չ միւսը ենթարկուող, ո՛չ մէկը տիրող կամ շահագործող և ո՛չ միւսը տիրուող կամ շահագործուող, և այդպիսով կկազմուի ազգի ամբողջութեան ճեջ մի ներդաշնակութիւն, ամէն տեսակէտով, որ մինչև ցածր ճարտարութեան անձանօթ էր եղել:

Ինչոր մէկ ազգի, միևնոյնը կլինի և՛ բոլոր ազգերի ճեջ:

Ու այդ կերպով, դասակարգերից և դասակարգային կռուից ազատուած ազգերը, կատարելապէս տէր և միահեծան իրենց բախտին, նրանք կկապուեն իրարու հետ համերաշխական՝ դաշնակցական կապերով. այլևս մէկ ազգ միւսին ոտնձգութիւն անելու ո՛չ իրաւունք և ո՛չ էլ կարիք ի՛սկ կունենայ:

Երբ բոլոր ազգերը իրենց ճակատագրի տէրը կլինեն, այդտեղ սօցիալիզմը ճեղաւոր չի լինիլ, եթէ բարձր կուտուրա ունեցող ազգութիւնը կկանի յետադիմականին, կանգուն, լճացած վիճակ ունեցողին: Սօցիալիզմը բոլորին էլ տալիս է հաւասար պայմաններ, ո՛չ մէկին առաւելութիւն կամ ստորադասութիւն, ամէնքին էլ հաւասար անդամակցութիւն և ինքնիշխան իրաւունք — այդ դէպքում եթէ մի ազգի ճահ պատահելու լինի, չի նճանի այնպիսի ճահուան, որ մի բռնապետութիւն ոյժի գորութեամբ խլում է մի ազգի գոյութեան պայմանները և նրան առաջնորդում է դէպի գերեզման, — ո՛չ, այլ այդ ճահը, սօցիալիզմի օրօք, կլինի բընական, անխնայափէլի ճահ, նճան բոյսին, որ սպրեւու ո՛չ արճաններ և ոչ էլ հող ունի:

Ե զ ր ա կ ա ց ու լ ի լ ն — սօցիալիզմը ազգերին ջնջելու, նրանց ապազգայնացնելու, ճուրջու նպատակ չունի իրեն դրած: Երբ այդպէս, ապա մի ազգի պրոլետար, ուրեմն և

սօցիալիստ, իրականորդ իրաւունք ունի իր անձնական շահերը պահպանելու և արգելիլ անհարգանքները և սպառնալիքները վտանգի դնելու մարտնչելը: Բանի սոցիալիստական անհարգանքը գոյութեան ինքնիրեն թէ՛ չհետաքրքրուած են հաւասար իրաւունքներով թէ՛ պարտուած թէ՛ գործատու: անբնական է, որ սոցիալիստ իրաւունքները անհարգանքով հանդէպ անոր երկու հակառակ դասակարգերը զանգուտ դիրքերից թիպեղ յարձակուեն և վրայեն այն ընդհանուր վտանգի դնեն, որ ձգտում էր հաստատու պէս ոչնչացնել երկու դասակարգի էլ անձեռնմխելի իրաւունքները: Ինչպիսին է սոցիալիստ անհարգանքը գոյութեան իրաւունքը:

Շատ ազգերի համար այդպիսի ինդիւր գոյութիւն չունի, բայց ճեղ համար դեռ գոյութիւն ունի, — ճեր հանգամանքները տարբեր են: Երբեք գոյութեան շահերը իրենց հետեւ:

Իմաստակ կլինէր այն սօցիալիստը, որ ազգերի մէջ եղող դասակարգերից և դասակարգային կռուից կհետնցնէր թէ սօցիալիստ գործաւոր դասակարգը անտարբեր պիտի մնար էթէ արտաքին մի ոյժ աշխատէր ոչնչացնել այն ազգութիւնը, որի մի անդամն էր և ինքը:

Առանց երկարացնելու լիշենք պատճական մի դեպք:

Երբ նապօլեօն Գ. շը պատրաստուած էր յարձակում գործել Ռուսիայի դէմ, Իտալական ծիւթեան համար, և կարծուած էր թէ յաղթութիւնից յետոյ նա իր բանակները պիտի ուղղէր դէպի Գերմանիա, — Կարլ Մարքսը առաջինը եղաւ, որ ազդակ բարձրացրեց և սասց որ այդ պարագային ամբողջ գերմանական ժողովուրդը ոտքի կկանգնի մի մարդու պէս և նապօլեօնի ղեկավարներին առաջը կերթայ եւ այդ ճիշդ արձակողը պատճութեան մատերի վրաստական թէօրիան տուող, դասակարգային կռիւը հրապարակ բերող, «պրոլետարներ բոլոր երկրների՝ միացէ՛ք» կոչը արձակող Մարքսն էր: Ուրեմն Մարքսը տեսաւ մի հանգամանք, երբ գործաւոր և բուրժուա, կարող էին միաժամանակ կռուել հանրական այնպիսի իրաւունքների համար, որ երկու դասակարգինն էլ է: Անշուշտ պատճական մի այդպիսի հանգամանք չի ոչնչացնում դասակարգերի գոյութիւնը, — ոչ, ինդիւրն այն է, որ սոցիալիստ անհարգանքը գոյութեան վտանգի դնելու պարտաւոր է յառաջ նետուել նոյնքան պրոլետարը՝ որքան որ բուրժուան: Պրոլետարը, սօցիալիստը չի կարող ասել թէ փոյթ չէ որ ազգութիւնն ոչնչացնում են և ինձ ստիպում ձուլուել, — ոչ, այդ դեպքում նա կռիւ ունի մղելիք, և Կարլ Մարքսը ինքն է այդ ասողը:

Ճշտական թուականներին երբ տիրող ընդհանուր հաստատուութեան էր որ շուտով Ռուսիան Պոլիս պիտի մտնէր և գրաւէր, այդ ժամանակ Կարլ Մարքսը ո՛չ միայն մի խիստ արշաւանք սկսեց Ռուսիայի դէմ, այլ փաստեց թէ Անգլիան մասնաւոր պարտականութիւն ունի իր զօրաբանակները և նաւերը առաջ քշել և թոյլ չտալ, որ Ռուսը Պոլսի մէջ հաստատուէր: Մարքսը անշուշտ գիտէր որ Պոլսի մէջ ուղղակի խաղի էր դրուած ո՛չ թէ բրիտանական պրոլետարիատի, այլ կապիտալիստի, տիրող դասակարգի շահը, և այդպէս լինելով հանդերձ, նա կուզէր որ ամբողջ Բրիտանիան (ուրեմն և գործաւոր դասակարգը) յառաջ նետուէր, կռուէր և թոյլ չտար, որ Ռուսը Պոլսի մտնէր: Մարքսը ինքը կփաստէր, անպատճառ, թէ ինչպէս Պոլսը Ռուսի ձեռքն անցնելով բրիտանական պրոլետարիատն էլ կտուժէր:

Եւ այստեղից դարձեալ եզրակացութիւն, այն որ պատճութեան մէջ կան հանգամանքներ, երբ մի ազգի մէջ եղած դասակարգեր կարող են միահամուռ ոյժերով կռուել ճի այնպիսի երրորդի դէմ, որ երկուսի էլ թշնամին է: և աշխատում է երկուսի էլ հանրական, անձեռնմխելի իրաւունքները ոչնչացնել:

1905-ին Տրիեստի սօցիալիստական վճռորէնը նոյնպէս որոշեց յոր գործաւոր պայտակարգը լուրին և սօցիալիստի իր ազգային իրաւունքները պահպանելու իրաւունքը և կարողանալու իրաւունքները պահպանելու: Ինչպէս որ սօցիալիստական կանոնները պահպանելու պարտաւոր են սօցիալիստական մարտնչները: Ինչպէս որ սօցիալիստական համայն խօսքը տակին երբ սօցիալիստական աշխարհի մէջ որոշ լիք ունեցող ժօրքի իրենարին: Ահա թէ նա ինչ է ստուծ տրեքս հրահրարակող իր գրքի այն գլխի մէջ, որ խօսում է Երասքին քաղաքականութեան պրօբլեմներ (ինդիւրների) մասին:

«Արտաքին քաղաքականութեան նկատմամբ սօցիալիստների դիրքը արտապայտուած է միայն մէկ բառով, այն է միջազգայնականութիւն: Բայց ո՛րքան չափազանցութիւններ, ո՛րքան անհեթեթութիւններ, ո՛րքան գրպարտութիւններ մթնաջրնում են այդ բառի նշանակութիւնը: Ելծմս աւելի քան երբէք հարկաւոր է միջազգայնականութեան սահմանը տալ:»

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱԶԵՐԸ

Միջազգայնականութիւնը հոմանիշ չէ հակահայրենասիրութեան: Սօցիալիստների նպատակը չէ ազգային միութիւնների չքայմանը հետապնդել: Նրանց նպատակն է ազգերի համախմբումը խաղաղարար մեծ դաշնակցութիւնների ձևի տակ, որոնք փոքր առ փոքր իրարու ձօնենալով, ամբողջ քաղաքակիրթ աշխարհը պիտի կազմեն. նրանց նպատակն է միջազգային օրէնքների յառաջադիմական մշակումը՝ ամբողջ մարդկութիւնը կազմակերպելու համար այնպէս ինչպէս պետական օրէնքները կազմակերպել են ազգերին: Բայց մեր կառուցանելիք այս մեծ շէնքը, որ ամբողջ մարդկային յեղը բովանդակելու չափ ընդարձակ պիտի լինի՝ իրեն սիւներ պիտի ունենայ ազգերը: այդ շէնքը պիտի հանգչի՝ ազգերի գանգուածի վրան, որ դարերի աշխատանքով ամրապնդուած է, և որոնց քայքայումը իր հետ կերելի նոյն այդ շէնքի քայքայումը:

Մենք խիզախօրէն պէտք է մարտնչենք դեմագոգիքական») այն իմաստականութեան դէմ, որ ասում է թէ հայրենիքը և ռամկավարութիւնը արտօնեալ դասակարգի գիտան է՝ իր արտօնութիւնները պահպանելու համար: Մեծ բան է, երբ մի ազգ ունի դարևոր կեանքով տոգորուած իր հողը, բաղմաթիւ սերունդների խօսած իր լեզուն, իր հանճարի հրաշակերտները, իր պատճութեան յիշատակները, անցեալ դարերից ի վեր յամբօրէն կուտակուած քաղաքակրթական այն գանձերը, որոնց մէջ ներկայ դարը ճանաչուած է իր հայրենական ժառանգութիւնը: Կազմակերպուած ընկերութեան և էլ վօլիցիայի (ընաշրջման) ներկայ կայանքի ամենաբարձր ձևն է ազգութիւնը. — էթէ ճեղ համար մասնաւոր կարևորութիւն ունի ընկերային իրողութիւնը, ապա կարելի է ժխտել ազգային իրողութեան կարևորութիւնը, որ յաճախ առաջինի հետ նոյնութիւն է կազմուած:

Բայց մի ազգ ներկայ մարդկութեան մատակարարած ընկերային ամենաբարձր յօրինուածութիւնը (organimse) միայն չէ: Նրա գոյութիւնը այն անհրաժեշտ պայմանն ունի, որ բոլոր իր քաղաքացիները ցանկանում են սարել միասին՝ միևնոյն օրէնքի տակ և միատեղ շարունակել իրենց նախա-

(* le socialisme a l'oeuvre, էջ 387. —

(** demagogue, (ամբոխավար, խուժանավար) դեմագոգ է կոչում այն քաղաքական գործիչը կամ հրետորը, որ ջանք է թափում ստապատիւր և խաբեբայ միջոյններով ու խտտումներով ամբոխ սիրտը գրաւել, նրան սիրապետել և սպա այդ մասսայական ոյժին ուղղութիւն տալ իր մասնաւոր շահի, իր թագուն միտումների տեսակետից:

Բոլոր անխիղճ և անսկզբունք քաղաքական գործիչները դեմագոգներ են:

Հայրերի Հանրական գործը Ազգը ըստ Ռեւանի *) արտայայտութեան, "Հանապազօրեայ ծի ժողովրդաբուէ (plebiscite) **)" է, ինչպէս որ անհատի գոյութիւնը կեանքի յարատե գոյութեան Հաստատութիւնն է: Այսպէս, ուրեմն, ազգային անկախութիւնը մարդկային ազատութեան ամենաթանկագին ձեւերից մէկն է. թշնամանել ազգային անկախութիւնը կը նշանակի անձեռնմխել իրաւունքի դէմ եղեռնափորձ կատարել: Սօցիալիզմը յարգում է բոլոր ազգերի անկախութիւնը, նա յանկանում է որ ամէն ազգ կարողանայ զարգանալ իր գիտակցական կեանքի բոլոր լիակատարութեամբ: Սօցիալիզմը գիտէ թէ քաղաքակրթութիւնը սրբան պարտական է ազգերի ինքնատիպ Հանճարներին բեղմնաւոր բազմազանութեանը: Նա գիտէ որ ազգերը իրականութիւններ են, միւս չգեղծարգկութիւնը տակաւին միայն յոյս է:

"Այդ յոյսը, սակայն, սկսել է մարմին առնել: Հակառակ յետադիմական ոյժերի ընդդիմադրութեանը մենք ակնատես ենք թէ ինչպէս է ազգերի դաշնակցութիւնը պատրաստում: Ազգերի այդ դաշնակցութեան որպէս պատկեր կարող է ծառայել անցեալի մէջ կատարուած այն իրողութիւնը, թէ ինչպէս իրարու Հակառակորդ, երբեմն իրարու թշնամի իսկ նահանգներ միանալով՝ պետութիւններ կազմեցին: Բայց պետութիւնների միութիւնը յաճախ կազմուել է այնպիսի միջոցներով, որ մենք դատապարտում ենք . . . Մինչդեռ, ընդհանրապէս, խաղաղ Համաձայնութիւններով, ազատորէն վիճաբանուած և ընդունուած պայմաններով է, որ ուրուագծուած է ապագայի մարդկութիւնը":

"Եթէ սօցիալիզմը սկզբից ի վեր ինքն իրեն միջազգայնական յայտարարեց, դրա պատճառն այն է, որ նրա մղած կուրսը ազգերի սահմաններից միւս կողմն էր անցնում: Իրա պատճառն այն է՝ որ սօցիալիզմը մուտք է միջազգային տնտեսական էվոլյուցիայից: Որովհետեւ այդ էվոլյուցիայի միւս կողմն աստիճանին Հասած բոլոր երկրներում՝ սօցիալիզմը միւս կողմն մարտն ունի մղելիք, միւս կողմն թշնամին մարտնչելիք, և միւս կողմն ոյժերն են՝ որ նրան մղում են դեպի յաղթութիւն: Բոլոր երկրների պրոլետարներին յորդորելով իրարու հետ միանալու՝ Մարքսի և Էնգելսի Կօմմունիստական Մանիֆէստը նրանց հրաւիրում է աւարտել իրենց ձեռքով սկսուած պատմական շինքը և իրականացնել մարդկութեան քաղաքական և տնտեսական կազմակերպութիւնը":

Այսպէս, սօցիալիզմը որ նպատակ ունի անհատին ազատ, անկախ, ինքն իրեն տէր դարձնել թէ՛ տնտեսապէս և թէ՛ քաղաքականապէս, նա ինքն իրեն առաջինը հակասած կլինէր՝ եթէ մէկ ազգի տիրապետութիւնը միւսի վրայ քարոզած լինէր: Քաղաքական միահեծանութեան հետ՝ աշխատանքի միահեծանութիւն, արտադրող միջոցների ընկերացումն, — այդպիսով է որ կարելի պիտի լինի դասակարգերի գոյութիւնը ջնջել տուած մի ընկերութեան, մի ազգի ծոցի միջից և ներանց բոլորին համահաւասար պայմանների մէջ դնել, որպէսզի միահեծանորէն, անկաշխան կերպով արտայայտեն իրենց կամքը, ընկերային կեանքը հետաքրքրող ներքին և արտաքին բոլոր խնդիրների նկատմամբ: Եւ երբ մի անգամ անհատից դեպի անհատ հակամարտութիւնը կրադարի, երբ դասակարգային կուրսերը կվերանան և մէկ ժողովուրդ ինքն իրեն միահեծան տէրը կլինի, բնականաբար նրա առաջին

*) "Ինչ է ազգութիւն", այս տիտղոսն ունի Էրնէստ Ռեւանի ակնարկուած յայտնի դասախօսութիւնը.
 (** ժողովրդի հաւանութեան ենթարկուած որոշումը է plebiscite.

ձգտումը կլինի խաղաղ և համերաշխօրէն քարտէլ իր հարեան երկրների հետ, առանց մին միւսին վրայ բռնանալու, առանց մին միւսի ունեցածին աչք դնելու, որովհետեւ իրեն պէտք եղածը արդէն ունի:

Եթէ մի ազգի արտաքին յարաբերութիւնը դեպի այլ ազգեր կենդանական կուրս բնաւորութիւն (suite zoologique) է ունեցել, — դա եղել է հետեանք, գլխաւորապէս, մինչև ցարդ եղած ընկերային կազմի. երբ մի անգամ ընկերային կազմը ամէն տեղ կորուի միւս կողմն հաւասարութեան և արդարութեան հիմունքների վրայ, որ կը բղխեն դասակարգերի ջնջումից և արտադրութեան միջոցների ընկերականացումից, — այն ժամանակ ազգերի միջից կչքանան փոխադարձ կուրսերի և արշաւանքների պատճառները, կտրի ընդհանուր խաղաղութիւնը և այդ խաղաղութեան մէջ կապրեն բոլոր ազգերը, որպէս մարդկութեան համիրաւունք անդամներ, որպէս միջազգայնական եղբայրներ:

Այնպէս որ մեր թունգ հակասօցիալիստական տարրը ի դուր է աշխատում տեսնել սօցիալիզմի մէջ այն ինչոր իրօք չկայ. իրենց բոլոր մտածունքները բնաւ լուրջ հիմունքներ չունեն և հիմնուած են վիճաբանութեան առարկայ եղող խնդրի ետիւնը և բնաւորութիւնը ՀՀակականալուծ մէջ:

Իսկ թէ սօցիալիզմը, մասնաւորապէս, ինչպէս է նայում ազգային և միջազգայնական լեզուական խնդիրների մասին, այդտեղ խօսքը, դարձեալ, տալիս ենք ժօրժ Ռեւարին:

Լսենք.

"— Քաղաքակիրթ ազգերին ինքնայօժար և աստիճանական կերպով մի համայնքի անդամ դարձնելու խոնջութաներից մէկն է և՛ լեզուի խնդիրը: Եւ այստեղից էլ յառաջանում է այն ջանքը, որով աշխատում են համաշխարհային մի լեզու ըստեղծելու, ինչոր հեգնում էին շատ առաջները: Խնդիրը այն ժամանակ է, թէ ինչպէս արհեստական կերպով կերտուած մի լեզուով փոխարինել այն լեզուները, որոնք ժողովուրդների հաւաքական գիտակցութեամբ՝ զարգացած են որպէս կենդանի էակներ: Մեր նպատակը այդքան հեռուն երթալ և այդքան խնդրական չէ: Միջազգային մեր յարաբերութիւնների համար մենք կարիք ունենք մի օժանդակիչ լեզուի, որը, սակայն, մեզ ձուռացնել չպիտի տայ մեր լեզուն: Միջազգային այդպիսի մի լեզուի անհրաժեշտութիւնը ամէն որ աւելի ու աւելի անխուսափելի է դառնում" . . .

Որովհետեւ տարածուած երեք կենդանի լեզուներից՝ ֆրանսերէնից, անգլերէնից, գերմաներէնից և ո՛չ մէկը չեն ուզում միջազգային լեզու դարձնել, հակառակութիւնների պատճառով. քանի և ո՛չ մէկ լեզուն խօսող ժողովուրդը ուզում է տեղի տալ, ուստի կարիք է զգացում, եղած ներհակութիւնները հաշտեցնելու և զգացած պէտքին բաւականութիւն տալու համար ստեղծել մի լեզու, որի մասին շատ մեծ մտքեր մտածել են Լէյբնիցից սկսեալ: Եւ այդպիսի մի նորաստեղծ լեզու, ժօրժ Ռեւարի, ինչպէս և շատ սօցիալիստների կարծիքով, կարող է լինել զօկտօր Զամենհովի ստեղծած լեզուն՝ "Էսպերանտո"ն (esperanto), որ իր չափազանց "պարզութեան" և "ձկունութեան" համար տանեսակ հազարաւոր հետևողներ ունի և ուսանելու համար շատ դուրիս է. — անշուշտ դա դեռ քննելի խնդիր է, և կարծիք է մի հրատապ պահանջի բաւականութիւն տալու, քանի որ միջազգային յարաբերութիւնները օրեցօր աւելի ու աւելի սերտանում են, իսկ տիրող լեզուները միջոց չեն տալիս այդ սերտութիւնը դիւրացնելու:

Բայց այդպիսի մի առաջարկով և հայեցակէտով երևան եկող սօցիալիստը միթէ՞ զրանով անպատճառ ձգտում է ազգային լեզուները ոչնչացնել, — երբեք. սօցիալիզմը այդպիսի բռնադատական ոգի չունի: Ահա՛ թէ այդ կէտին ինչ է պատասխանում Ռեւարը.

"Ազգային լեզուները, ուրեմն, գոյութիւն կունենան —

Հաւանական է որ ամենօրեայ գոյութիւնից այդ լեզուները դարարեցնելու ջանքը ի դուր կանցնի—և նրանք կշարունակեն իրենց սեպհական կեանքը պայծառ և բազմազան զրականութիւնների ծաղկափթթումով: Բայց մայրական լեզուի կողքին, որ սովորեցնում են թոթովիլ ամէն մանկան, որ մտում է զգացմունքի և երևակայութեան լեզուն, որի միջով զգացում է մեռած սերունդների ոգու բարբառը, — օժանդակիչ լեզուն կլինի միջազգային յարաբերութիւնների, առևտրական գործունէութեան, ժողովրդների իրաւունքի (droit des gens) և համաշխարհային գիտութեան լեզուն. ու դա կլինի ազգերի դաշնակցական կազմակերպութեան ակներև յայտնապատկերը, որ կհաստատուի ազգերից վեր՝ նրանց իւրաքանչիւրի ինքնավարութիւնը և ինքնատիպութիւնը յարգելով”:

Այս բոլորից յետոյ նրանք՝ որոնք սօցիալիզմին հակառակում են և սօցիալիստ չեն ուզում դառնալ, որպէսզի իրենց հայութիւնը չը կորցնեն, — նրանց յանձնարարում ենք ուշի ուշով կարգաւ ասուածները և տղիտութեան զոհ երթալով՝ չտոնակոխել իրենց սեպհական շահը: Կենել ու այն է այդ գուրկ տնտեսական և քաղաքական ամէն իրաւունքներից, չունենալ ոչինչ՝ բացի իր ձեռքերը և ոտքերը ու քսաներորդ դարու մէջ առաջնորդուիլ ամէն շարժում, ամէն թարմութիւն և կենսականութիւն սպանող գաղափարներով՝ ինչպիսին է պահպանողական-ազգայնամուտութիւնը, — դա աւելի քան աղէտալի է հէնց այն ազգային շահի տեսակէտից, որի անունով, որ դրանք խօսում են: Կարող են հանդարտ և վստահ լինել, որ սօցիալիստ դառնալը իրենց չի զրկիլ հայ լինելուց: Այս էլ ասենք, որ հնամուտական աւանդութիւններով և մաշուած պատճառաբանութիւններով ընդդիմադրելը որքան որ ժամանակաւորապէս իր յաջողութիւնը ունենայ, այնուամենայնիւ այդ ուղղութիւնից յառաջացած խոչնդոտները կեանքի յառաջադիմական անխի տակ իրենք իրենց պիտի փշուեն և ճանապարհ տան ժամանակի անտգորելի պահանջին. իսկ սօցիալիզմը մի պահանջ է, որ հրամայական կերպով մեր առաջն է կանգնած, որպէս արդիւնաբար գործն պատճառական ոյժերի. իսկ այն՝ ինչոր պատճառական ուղի է ընդունել և յառաջ է քայլում յղթականօրէն՝ նրան այլևս կանգնեցնել չի կարելի, նա իր ուղին կշարունակի հակառակ ամէն խոչնդոտի:

Առանց սօցիալիզմի Հայկական Դատ չկայ, մեր թունդ ազգայնամուտ-պահպանողականները փոխանակ անտեղի ճիգեր թափելու չեղած տեսութիւններ և ենթադրութիւններ ստեղծելով, լաւ կլինի որ խնդրի էութիւնը հասկանան աւելի ի մօտոյ և ձեռնհաս անձինքների միջոցով ուսումնասիրեն սօցիալիզմը, նրա յարուցած խնդիրները և ընդհանուր նպատակը:

Գրանք մեր նորաբոյս այն սօցիալիստ կոչումներին, որոնք իրենց կարծիք սօցիալիստութեան յայտարար նշանը տալու համար սիրում են ամէնից առաջ յարձակում գործել “լճացած, ճահճացած հայ կեանքի” վրան: Ինչոր հայկական է՝ սրանց կարծիքով, “լճացած”, “ճահճային” է, իսկ ինչոր ուսական, եւրոպական — դա արդէն ուրիշ է:

Անշուշտ հայ կեանքի մէջ էլ կան ճախճախուտ մասեր, ուսականի էլ, և ինտելիգենցիայի պարտականութիւնն է ո՛չ թէ ճահճիճը տեսնել և փախչել, այլ աշխատել այդ ճահճիճը չորացնել. իսկ այդ նպատակին հասնելու համար հարկաւոր է ճահճիճը և նրան անփաս դարձնող ու պողաքերող տարածութեան վերածող ազդակները լաւ ճանաչել: Առանց հայ ժողովուրդը ճանաչելու, առանց այդ ժողովրդի հետ հոգեկան յարաբերութեան մէջ մտնելու՝ վեր կենալ և աւմէն ինչ բացատրել սերտովի խօսքերով, — դա կլինի Միտրաֆանուշկայի քերականագիտութիւնը:

Սօցիալիզմի հակառակորդները նեղն ընկած սկսեցին զբարարութիւնների ճանապարհը բռնել. հետևանք յառա-

ջացնող այդ զբարարութիւններից մէկն էլ այն եղաւ, որ նրանք ժիւլ Գէրի, սօցիալիզմի այդ անընկճելի ուսկիրայի բերանը այն խօսքը դրեցին թէ la question sociale est une question d'estomac (ընկերային խնդիրը ստամոքսի խնդիր է): Ի դուր ժիւլ Գէրը և բոլոր սօցիալիստները բրօշուրներով, բանաստեղծութիւններով հերքեցին այդ զբարարութիւնը. բուրժուաները և նրանց իղէօլօզները շարունակեցին այդ ստեղծովի ամբաստանութեան՝ ընթացք տալ, և դրա հետևանքը այն եղաւ, որ սօցիալիստական զբարանութիւնից տեղեկութիւն չունեցող սօցիալիստների աւկանջն ընկնելով այդ զբարարութիւնը, նրանք էլ հալած իւրի տեղ ընդունելով՝ սկսեցին ոյժ տալ այդ կարծիքին, մտածելով թէ ասածնին սօցիալիստական մի փաստաբանութիւն էր:

“Ես միայն իմ մի կտոր հացիս և կարագիս կը նայիմ”, — յաճախատում են ոչ. գիտական սօցիալիստները, նրանք՝ որոնք իրենց անարխիստական թէօրիաները սօցիալիզմի անուան տակ են ուզում քշել:

Ամենամեծ անպատեութիւնը կլինէր՝ պրոլետարիատի դերը տեսնել միայն “հացի և կարագի” առատացնելու խնդրի մէջ: “Հացը և կարագը” չէ խնդիրը, նա այնքան է հետաքրքրում պրոլետարիատին, որքան որ կապակցութիւն ունի արդարութեան և ճշմարտութեան հետ: Պրոլետարիատը պատմական այն ազդակն է, որ իր բազուկներով պիտի գայ հաստատել այս աշխարհի (և ոչ թէ միւս) վրայ այն արդարութիւնը և ճշմարտութիւնը, որ շատ փիլիսոփաներ, շատ բարոյագէտներ, — Բուդդաներ, Կոնֆուցիոսներ, Արիստոտելներ, Յիսուսներ, Պլատոններ, Թոմաս Մուրեր . . . — երազեցին, հազիւ ուրուագծեցին, բայց ձուտեան, մարմին տալ չկարողացան:

Եւ ահա պատմական այդ կոչումը ունեցող տարրին վեր կենալ քարոզել, թէ որովհետև դու Բուդդարիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Կովկասի . . . մէջն ես ապրում, ուստի քո գործունէութեանդ հորիզոնը պիտի լինի միայն “հացը և կարագը”, ուրիշ ոչինչ, — դա պրոլետարիատին նախատել ասել է:

Ասել այդտեղերի հայ պրոլետարական տարրին թէ՛ դու միայն քո աշխատանքի ժամերի կրճատուելուն, վարձագինիդ բարձրացնելուն և հանգստութեանդ նայի՛ր, — կնշանակի ձրգտել նրան դարձնել մի այնպիսի ինքնատէր, որի համար իր անձից դուրս այլևս ոչինչ բարձր, ոչինչ վսեմ, ոչինչ շարժիչ չկայ:

Հայ պրոլետարը՝ Կովկասի, Բուդդարիայի, Ամերիկայի . . . մէջ իր տեղական պրոլետարական կռիւր թող մղի ներկայացած պայմանների չափով, բայց նա երբէք աչքից բաց չպիտի թողնի Հայաստանը, հայ երկիրը, ուր մղում է կռիւններից ամենաբարձրը, ամենավսեմը, — մի կռիւ, որ ամենից աւելի պիտի շարժէր նոյն այդ պրոլետարիատին, որովհետև այնտեղ մի ամբողջ ժողովրդի գոյութեան և ոչ-գոյութեան, անհատական սպանութեան խնդիրն է դրուած: Եւ այս պայմանների տակ ոճի՛ր, ոճի՛ր է պրոլետարիատին ձեռնթափ մնալ քարոզելը, և այդ միայն նրա համար, որ պատմական աշխարհակալների, անցեալ ոյժերի մարմնացնող ազդակներով մենք իրարուց բաժանուած ենք: Ու այդ ոճի՛րը քարոզել յանուն սօցիալիզմի” . . . Բայց գերմանական պրոլետարիատը նոյնպէս անցեալ ոյժերի գծած սահմաններով էր իրարուց բաժանուած, նրանք նոյնպէս դասակարգային կռիւ ունէին իրանց մէջ, երբ Կարլ Մարքսը ազդակեց թէ ամբողջ Գերմանիան ոտքի կկանգնէր, եթէ Նապօլէոն Գ-ը իր զօրաբանակները դէպի այն կողմը քշէր: Միթէ ազգայնամուտ, “նացիօնալիստ” էր Մարքսը — երբէք: Երբ անհատական գոյութեան տարրական իրաւունքը վտանգի մէջ է, երբ մի ժողովրդի, մի ազգի ուզում են սպանել, ջնջել որպէս մի

անհասի, երբ մի ազգի ուղում են զարմնել լ ձ կ ա ն ա-
ն ա ս ու ն, — այն ժամանակ ճարտիպան արժանապատուութիւն
անեցող, անասունից մի քիչ վեր կանգնող ամէն ճարտի քնչ
զառաքարգի մէջ էլ որ լինի, ոտքի կկանգնի և իր գոյու-
թիւնը, իր իրաւունքները կպաշտպանի. — այդ էր Մարքսի ա-
տաճը, և այդպէս մտածում են բոլոր նրանք, որոնք ստուերը
գիտեն զանազանել իրական ճարտիպ ստառը, ոգուց:

Երբ Կովկասի Հայ պրոլետարիատը ձեռք կարկառի Սա-
տուկոն, Մշեցոն, Վանեցոն և... զա կլինի ազգայնամոլու-
թիւն, նացիոնալիզմ՝ Հանգր, — նա այնտեղ գործ չունի՝
եւ գործ չպիտի ունենայ, որպէսզի նացիոնալիստ՝ չդառնայ,
մնայ զուտ, կարծիր սօցիալիստ՝

Կրկնութիւն կիտի լինելը ապացուցանելը թէ Կա անհա-
տական խելքի մի փշոց է, որ գործ չունի սօցիալիզմի հետ:
Այդպիսիներին կառաջարկէինք նորից կարգալ ժօրժ Ռոնարի
հատուածը և լաւ ուսումնասիրել Կարլ Մարքսի 40-ական
և 50-ական թուականների գրածները:

Քանի որ խօսքը ազգայնականութեան, նացիոնալիզմի ճա-
սին է—մի բառ, որ մտտի փաթեթն է զարձել բոլոր
նրանց, որոնք յաճախ իրենց սօցիալիստական գիտութիւնը
բառերի քաշքշուկի մէջ են տեսնում — աւելորդ չենք
համարում հեղինակաւոր նացիոնալիստի գրածներից մի կտոր
յուտալ բերել, ցոյց տալու համար տարբերութիւնը իսկական
նացիոնալիզմի կարծեցեալ նացիոնալիզմից:

Ներկայ բուրժուազական Ֆրանսիայի յայտնի պետական
գործիչ Ժիւլ Ֆէրրի, 1885-ի յուլիս 20-ի նիստի
մէջ, հետեւել թէզը պաշտպանեց. — Քաղաքական հաստա-
տութիւնների խաղաղ շողիւնով չէ այժմս, որ ազգերը մեծ
են... Հասարակապետական կուտակցութիւնը շատ լաւ
հասկացաւ, որ Ֆրանսիային չէր կարելի սուաջարկել քա-
ղաքական մի այնպիսի իդէալ, որ կարող էր յարմարիլ
միայն այնպիսի ազգերին, ինչպիսին են ազատ Բելգիան և Հա-
տարակապետական ազատ Զուիցերլանդ. նա գիտցաւ որ Ֆը-
րանսիային ուրիշ բան է պէտք, — այն՝ որ նա միայն ազատ
երկիր չպիտի լինէր, այլ պիտի լինէր և՛ մեծ երկիր,
բոլոր Եւրոպայի ճակատագրի վրայ իր
ամբողջական ազդեցութեամբ ներգործող
մի երկիր, որ Ֆրանսիան իր ազդեցութե-
թիւնը պիտի տարածէր ամբողջ երկրագնդի
վրան եւ տանէր այն ամէն տեղ, ուր որ
կարող էր, իր լեզուն, իր բարք ու վարքը,
իր դրօշակը, իր գէնքերը, իր հանճարը..."

Ահա զուտ նացիոնալիստական ոգին իր ամբողջական
թափի և պայծառութեան մէջ: Ժիւլ Ֆէրրիի ասածները
նշանաբան են ֆրանսիական բոլոր նացիոնալիստների: Նոյն
ուղղութիւնը և ոգին ունին գերմանական, անգլիական, ռու-
սական նացիոնալիստները:

Իսկ մե՛նք ինչ ունինք, — մենք մեր դրօշակը, մեր լե-
զուն, մեր բարք ու վարքը, մեր ազդեցութիւնը, մեր հանճարը
ամբողջ Թիւրքիայի, ամբողջ Ասիայի թէ՛ ամբողջ երկրա-
գնդի վրան ենք ուղում տարածել: Կայ այդպիսի մի մի-
տում մեր մէջ, որ նացիոնալիզմ անունով է մկառում այն
ձգտուծը, երբ Կովկասի Հայ պրոլետարը ձեռք է ուզում կար-
կառել սահմանից միւս կողմը՝ եաթաղանի տակը կանգնած
իր եղբորը: Ի՛նչ նացիոնալիզմ, երբ մի ժողովուրդ ուզում
է իր պատմական, անհատական գոյութիւնը պահպանել և
նրան այդ զանում են՝ յանուն սօցիալիստական այնպիսի ըս-
կըզբունքների, որ գոյութիւն չունի:

Եւ այսպէս, այս արիւն-կրակի օրերի մէջ ժամանակ է որ
իրար հասկանանք, ժամանակ է որ ամէն մէկի մտածմունքը
իր ամբողջ մերկութեամբ հրապարակ դրուի որպէսզի թա-
գուն ոչինչ չմնայ և ի զուր մտքերը պղտորելու պատճառ

չդառնայ:

Հնւատարի՛մ իր առաջադրած պատճառն նպարտակին՝
թուրք նացիոնալիզմը ամենայն յամառութեամբ և յարատեւ-
թեամբ գործադրում է իր հայաջինջ քաղաքականութիւնը.
երկիրը դատարկում է. անխյայտնի կերպով մեռցնում, ըս-
պանում են մի ժողովուրդ, և այդ կատարում է մեր աչքի
առաջ. ու՛ մենք այդ տեսնում ենք, և փոխանակ անմիջական
այդ վտանգին դիմազրուելու մասին խորհելու և թոյլ չտա-
լու որ սուլթանական երազուած ոճիւրը իրականութիւն ստանայ
— միշդ այդ ողբերգական պահուն ոմանք զապալք են լի-
նում յանուն չմարտուած, թիւր հարկացուած և սխալ մեկ-
նաբանուած վարդապետութիւնների, ոմանք էլ յեղափոխական
գործից հեռու են փախչում, չեն մասնակցում՝ որովհետեւ
այդտեղ կան սօցիալիստներ, որոնք իրենց սօցիալիստ դար-
ձնելով՝ Հայ լինելին կորցնել կտան":

Իտալացի յայտնի սօցիալիստ Ամիլիար Չիպրիանին, Ի-
տալիայի ներկայ վիճակը քննադատող իր յօդուածի նախա-
բանը արել է՝ անմահ՝ Գարիբալդիի այն խօսքերը, որ 1868-ի
յուլիս 29-ին նա ուղղել էր Բօլօջիի իր բարեկամներին:

Որովհետեւ այդ խօսքերը ներկայումս մեզ էլ շատ են
պատշաճում, ուստի բերենք այն:

— Իմ վրայ էլ, ինչպէս և ձեր, ծանրանում է այն ան-
ւանարկ կեանքը, որին ենթարկուել է մեր երկիրը՝ մի բուռն
թշուառականների կողմից. և եթէ անցեալ տարի խտրացի-
ները ինձ հասկացած լինէին՝ ձեզ հետ միասին մենք կարող
կլինէինք Իտալիան դուրս քաշել այդ անկուծից. բայց, դժ-
բախտաբար, մեր դիւցազներգութեան հրաշալի հերոսների
կողքին, որոնց ոսկորները սփռուել են հարիւրաւոր ճակա-
տամարտների դաշտերի վրան, և որոնք ուրիշ բան չէին ու-
զում, եթէ ոչ միայն Իտալիայի թշնամիների դէմ մարտնչել, —
ահա հէնց այդ հերոսների կողքին զանում է դօկտրինե-
րների (վարդապետոյնների) և դաւաճանների խառնիճաղանձ
մի ամբոխ, որոնք սկզբունքների և յստակամոլութեան
(purisme) պատրուակի տակ լքում են իրենց ընկերներին՝ ճիշդ
վտանգի ընկնելին":

Եւ արդարեւ, ոչինչ այնքան դատապարտելի չէ, որքան
"վտանգի ընկնելին" ընկեր ընկերոջ ձգելը զանազան անարդա-
րանալի "յստակամոլութիւն"ների պատճառով: Եւ սակայն
այդպիսի տխուր երևոյթներ չեն կարող տեղի ունենալ, եթէ
նախապէս ընկեր ընկերոջ փորձի լաւ հասկանալ:

Պատմութեան այս ծանր ընկնելի մէջ եթէ հակաճա-
ռել, ընդդիմախօսել հարկ է, դա պէտք է լինի իրարու հաս-
կանալու և ընդհանուր վտանգին խտացած ոյժերով դիմա-
զրուելու դիտումով, — դէթ մեր ուղեղի՛մը այդպէս է:

"Դարերի առասպելը" (La légende des siècles) իր հրա-
շակերտի մէջ Վիկտօր Հիւգօն սքանչելի կերպով պատկերաց-
նում է այն տեսարանը, թէ ինչպէս Աստուածների ամբարհաւած
համաժողովը քրքիջ է բարձրացնում՝ երբ յանկարծ իրենց ա-
կուծքին մէջ է երևում Որոմպոս լեբան Սատիրը (այժ մարդ):
Սկացած դէմքով, գրգգրուած մազերով, սոճաթաթառ ոտքերով
Սատիրը ո՛ւր, Աստուածների ժողովը ո՛ւր: Եւ զրա համար
էլ նրա պիսին չորս կողմից թափուած է հեղանալի, ծաղր ու
ծանախի տարափ:

Այժմարդը անմահներին պատասխանում է յեղ ա փ ու-
խ ա կ ա ն, մ ա ր ա ա կ ա ն մի երգով: Երգը հնչում է:
Նաո ժամանակ չանցած՝ ստեղծուած է մի տաք
մթնոլորտ. Հերմէսը իր սրինգն է տալիս Այժմար-
դին, Ապօլօնը՝ իր քնարը: Յեղափոխական երգը հրային
լեզուններով, բարձրագո՞ւ ելեւջներով դէպի երկինք ամբառ-
նալով՝ խլացուցիչ աղաղակների և որոտումների է փոխուած:
Երգիչն էլ սկսում է ուռչել, մեծանալ. ահազին տարածու-
թիւններ են մտնում այդ սև ձևի մէջ, մի քանի ընկնել է և

ահա՛ ամբողջ աշխարհը ոտքի է կանգնում և բռնութիւնը մարմնացնող Արամազդին (Ռափտերին) գահոյցից վայր գըլրում. Place à tout! Je suis Pan; Jupiter à genoux!՝ աղաղակելով.)

Պարերի առասպել՝ի մէջ յիշուած Սատիրը թոյլերի, կեղեքուածների ու ճնշուածների պաշտպանած Դասն է: Բռնութեան տակ հեծող ժողովրդի պղտորական Գործը ինքը Սատիրն է: Աղտորական գործն էլ սկզբում թոյլ, փոքր, տկար ոչ ժերով է երևան գալիս, նա արհամարում է մը սպարիտի, խեղճերի, խղիկների մէջ ճնուած լինելուն համար. նրա գեղջկական թխացած դէմքը, գործաւորական սււացած բազուկը իր խոնարհութեան մէջ միայն քրքիջ և երգիծանք է յարուցանում օրուան անմահների, գորեղների, կողմից:

Ժողովրդական Դասը շատ ժամանակ չանցած՝ մեծանում, ուռչում է. սեր՝ սկզբնական միջուկը, փոքրիկ ամբողջ երթալով անում, ճարակում, բոցավառում է ամբողջ ժողովուրդը, ամբողջ երկիրը: Եւ այնուհետեւ այլևս նա չի արհամարհում, այլ դարհուրանք, սարսափ է ազդում: Ու սկսում է հալածանքը, կոտորածը: Մարտը սատականում է, բռնութեան դէմ կռիւ մղողները ճի վերջին ճիգ են թափում և նրան իր գահոյցից վայր գըլրում ու նրա տեղը մղում դատի յաղթական դրօշը վարում:

Ռիմպոսի Սատիրը, — դա բոլոր ժողովրդների յեղափոխական գործը, նրանց մղած դատն է, ուրեմն և՛ մերը՝ Հայկականը:

Ռիմպոսի Սատիրը՝ իր ամբողջութեան մէջ՝ դա սօցիալիզմն է: Նա է որ բոլոր Արամազդեան բռնութիւնների դահր պիտի փշրի ամէն երկրների մէջ և ամէն կարգի Արամազդներէն ծունկի բերի:

Նա է պարտաճանաչ, ով կաջակցի յեղափոխական մարտագոյի թնդալուն և Արամազդ բռնապետներին իրենց գահոյցներից վայր բերելուն:

Միտքը յստակ է, գործունէութիւնը պարզ, երբ դեպի այդ նպատակն է ուղղուած:

Իսկ այդ բոլորը ամփոփուած է սօցիալիզմի և սօցիալիստական յաղթանակի մէջ:

Ս. ՍԱՊԱԷ-ԳԻՒԼԵԱՆ

ԳՈՒՄԱՅԻ ԼՈՒԾՈՒՄԸ

ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲՈՂՈՒՄ

Բրիւքսելի Միջազգային Սօցիալիստական Բիւրօն Միջազգայնականի բոլոր կազմակերպութիւններին ուղղել է հետևեալ ազդու մանիֆէստը.

ԲՈՂՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՌՆԵՐԻՆ

Այն ժամանակ, երբ Նիկոլայ Բ. պատրաստուած էր հրակրել Խաղաղութեան Առաջին Կօնֆերանսը, Մայրաքոյն Արևելքում իր քաղաքականութիւնը պատերազմը դարձնում էր անխուսափելի՝ Զապօնիայի դէմ:

Այն ժամանակ, երբ նա Լա Հէյի Երկրորդ Կօնֆերանսից մեծարանքներ էր ընկրւում, հրամայում էր լուծել Երկրորդ Դուճան:

Այս կրկնակ զուգարկութիւնը հրաշալիօրէն լուսաւորում էր.

(«Տեղ ամէնքին, ես Պանն եմ, Իւպիտեր ծունկի»:
 (Պանը յունական դիցաբանութեան մէջ հովիւների աստուածն էր, մեղունների պահապանը և ձկնորսութեան ու որսորդութեան պաշտպանը. նա ներկայացնում է մարդու գլխով և իրանով, նախադի արունքներով, եղջիւրներով և պոչով. հովուական արինգ ամող, որ ինքն էր հնարել:)

բանում է այն կատակերգութիւնը, որ խաղացուել է և խաղացուած է տակաւին Լա Հէյում և Ս. Պետրբուրգում: Հեղինակութիւնը կատարեալ կլինի, երբ Երկրորդ Կօնֆերանսը կը գումարուի այն մարդու ձեռքով շինուած պալատում, Միացեալ Նահանգներում, որ առաջին անգամ գործաւոր դասակարգի վրայ բաց թողեց զինուած ոստիկաններ և ճշգեց աշխարհի անջն իր ընկերային խաղաղութեան ըմբռնումը՝ հըրացանի բռնելով իր գործարանների աշխատաւորներին, որոնք ստեղծել էին իր ահագին հարստութիւնը:

Երկար ժամանակից ի վեր, պրոլետարիատը թափանցել է Ռուսաստանի կառավարութեան ամէն ռեակցիայի առանցքը եղող աւանդական քաղաքականութեան մէջ: Արտաքին խաղաղութիւնը որ նա հասկանում է, դա ո՛չ թէ պատերազմի ջնջումն է, այլ ցարիզմի հակառակորդի և և նրա գերշխանութեան թուլացումը: Ներքին խաղաղութիւնը, որ նա երազում է, դա պարտուած ժողովուրդն է և յախտնեանկանացած ինքնակարգութիւնը:

ԱՐԻՒՆՈՎ ԾԱԾԿՈՒԱԾ ՄԻ ԽԱՂԱՂԱՐՔՐ

Լա Հէյի Առաջին Կօնֆերանսից յետոյ, Նիկոլայ Բ. աւճայացրեց Մանջիւրիան և թոյլատրեց գործելու Բազովէա-չէնսկիի սարսափները: Նա ժխտեց Ֆիլանդական ժողովրդին տուած երդումը և խեղդեց արեան մէջ ամբողջ Ռուսաստանը: Ռիզայում վերահաստատեց միջնադարեան չարչարանքը. ազատ ձգեց անպատիժ կերպով կողոպտելու և ջարդելու, բիրտ զինուորական ոչնով, Գորիի աղքատ գիւղացիներին. թոյլատրեց Ակաուուի բանտերի պաշտօնեաներին՝ շարձակուելու և սուկնի հարուածներով սպանելու բանտարկեալներին և քաղաքական կայանաւորուհիներին: Մոսկուայի ապստամբութեան ժամանակ նա կրակի բռնել տուեց զինուորական հիւանդանոցները և երկար ժամանակ խռովութիւնից յետոյ՝ նորին Մեծութեան թիկնապահները սպանում էին, իրենց սովորական զբաղումների մէջ յանկարծակիի եկած երկաթուղային գործակատարներին, առանց որ և է դատաստանական ձևի:

Ճարը իր սեպհական հպատակների նկատմամբ վերաբերւել է այնպէս, ինչպէս ամօթ պիտի զգար նոյն կերպ վարուել թշնամի զինուորների հետ: Եւ կապիտալիստական ու գաղութային ծովահիւնութեան աւազակային խմբի այս պետը, որ մտերմական համաձայնութեան տեղ ստեղծեց արիւնոտ կռիւր, ճշանջենական խաղաղութեան փոխարինեց եղբայրասպան պատերազմը, ուզում է աշխարհին ներկայանալ իբրև ոչ թին գերակշռող իրաւունքի խորհրդանշանն ու անձնաւորումն: Ընդունելով հանդերձ, որ նա լինի անկեղծ, այնուամենայնիւ, նա չի կարող իրագործել իր խաղաղական մտադրութիւնները, որովհետև միլիտարիզմը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ պետութեան կողմից կազմակերպուած զինաւորութիւն՝ գործաւոր դասակարգը կապիտալիստ դասակարգի քաղաքական և անտեսական լծի տակ պահելու համար, — որովհետև կապիտալիստական ընթիմի օրօք, պատերազմները՝ պետութիւնների մէջ՝ ընդհանրապէս հետեւութիւնն են համաշխարհային շուկայի վրայ նրանց ունեցած հակաշահութեան, — որովհետև իւրաքանչիւր պետութիւն ո՛չ միայն աշխատում է պահել այն վաճառանւոյները, որ ունի, այլ նըւաճել ուրիշները ևս, և այս, շատ յաճախ օտար ժողովրդների ստրկացումով և նրանց հողերի գրաւումով: Լա Հէյում նստող զիւանագէտները թող լա՛ւ նային իրար: Նըրանք կը տեսնեն Արևմտեան Աֆրիկայի տէրերին Հնդկաստանի տիրապետողների կողքին, Մաղազասկարի նուաճողներին՝ Կօնգօյի շահագործողների կողքին, Մանջիւրիայի յաղթողներին՝ իրենց խեղճ հակառակորդների կողքին: Պատերազմները, որոնք նպատակ են տիրող դասակարգերի կողմից ժողովրդներին իրար հակադրելու նպատակով սխտեմատալքաբար

ճշակուած և պահուած նախապաշարումներին, պրոլետարիատի համար կազմուած են նոյն ինքն էութիւն կապիտալիզմի, որոնք կը ջնջուեն կապիտալիստական շահագործութեան հետ միայն: Գործաւոր դասակարգը, ընդհակառակը, պատերազմների բնական թշնամին է, որովհետև նա գլխաւոր զոհն է դրանց, — զոհը իր երեխաների զոհողութեամբ, զոհ՝ իր բուսացուածքի կորուստով, — որովհետև պատերազմները հակասութեան մէջ են սօցիալիզմի նպատակի հետ, որ մնունդն է մի նոր իրաւակարգի, հիմնուած արտադրողների համերաշխութեան վրայ, ազգերի եղբայրութեան և ժողովրդների ազատութեան վրայ:

Երբ, 1870-ին, Գերմանիան միացնում էր իրեն Ալգաս-Նոռնէնը՝ սօցիալիստական պրոլետարիատի ներկայացուցիչները՝ յանձին Բէքէլի և Լիբկնեխտի, բողոքում էին պատերազմի և միացման դէմ:

Երբ 1904-ին Ռուսաստանի և Զապօնիայի պաշտօնական աշխարհը զոհաբերում էր հազարաւոր երիտասարդ կեանքեր, Ռուսաստանի և Զապօնիայի պրոլետարիատների ներկայացուցիչները տալիս էին իրար, Ամստերդամում, եղբայրական զբոհարանութիւն:

1870-ին, երբ թնդանօթը որոտում էր սահմանների վրայ Գերմանիայի գործաւորները Փրանսիայի գործաւորներին դերում էին. "մենք երբէք չենք մոռանայ, որ բոլոր երկրների աշխատաւորները մեր բարեկամներն են և որ բոլոր երկրների բռնակալները՝ մեր թշնամիներն են":

Եւ Փրանսիական գործաւորները պատասխանում էին գերմանական գործաւորներին. "Փրանսիացի աշխատաւորներ, գերմանացի աշխատաւորներ, սպանիացի աշխատաւորներ, թո՛ղ մեր ձայները միանան պարսաւանքի մի աղաղակով՝ ընդդէմ պատերազմի":

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԱՆ ԵՒ ՅԱՐԻՉՄԱՆ

Այսպէս էր աշխատաւորների առաջին Միջազգայնականի (էնտէրնացիօնալի) խօսքը: Այսպէս է դարձեալ գործաւորական նոր Միջազգայնականի լեզուն: Հակառակ զրպարտութեան և հալածանքին՝ իր ներկայացուցիչները գործով քարոզել են ազգութիւնների մէջ խաղաղութեան գաղափարը՝ սխտեմատիքաբար մերժելով ամբողջ զինուորական վարկը, և շատ լաւ յայտնի է ամէնքին, որ այն օրը, երբ աշխատաւորները տէր կը լինեն բանակներին, պատերազմը կը ջնջուի: Ահա թէ ինչո՛ւ նրանք հետապնդում են, առանց յապաղման, բուրժուազիայի զինուորական զինաթափութիւնը՝ ընդհանուր ժողովրդական զինաւորումով: Ամէն անգամ երբ սպառնական մի ամպ է երևացել քաղաքական հորիզոնի վրայ, գործաւոր դասակարգը միջամտել է պարլամենտների և փողոցների մէջ՝ իր պատգամաւորներով և ցուցերով, և նա վճռել է վերջնական օրում, որքան կարելի է առաջ գնալ՝ կանխելու և արգիլելու համար պատերազմը: Իր քաղաքականութիւնը չի լինիլ հակասական, և ինչպէս որ անգլիական գործաւորները դէմ էին իրենց կառավարութեան՝ Տրանսվալի պատերազմի ժամանակ, այնպէս էլ չեն տեսնուի այլևս միջազգային պրոլետարիատների երկու հատուածներ՝ (Փրակցիա) դրուած երկու հակառակ բանակների մէջ:

Գործաւորական Միջազգայնականը պաշտպանել է միշտ այն սկզբունքը, որ մի կառավարութիւն չի կարող սպառնալ մի օտար ազգի անկախութեանը, առանց ո՛՞՞ր գործելու այդ ազգի դէմ, նրա գործաւոր դասակարգի և նոյնպէս միջազգային գործաւորութեան դէմ: Ահա թէ ինչո՛ւ խաղաղութեան գաղափարը կարող է մարմին առնել և յղթել՝ միայն սօցիալիստական գաղափարի յառաջադիմութեամբ և իրագործումով: Պատերազմը, ընդհակառակը, իր լաւագոյն ճշակութեան հողը գտնում է բացարձակապետութեան ու ժեղացման մէջ: Դուժմայի լուծումը, այս տեսակէտից, կազմում է ամբողջ եւրո-

պայի համար մի վտանգ: Նա ոչ մի մարդու չի զարմացրել: Ամէն ոք վարժուել է տեսնելու ցարիզմին իր խոստումները դրժելիս, և այն օրը, երբ նա ոյժ կունենայ, ուրիշ ազգութիւնների հետ էլ նոյն կերպ կը վարուի, ինչպէս վարուեց ռուս ժողովրդի հետ:

ՅԱՐԸ ԱՂԱՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Նիկոլայ Բ. վտանգի յայտնի օրում, խոստացել էր ազատութիւն: Բայց երբ վտանգը նրան երևաց նուազ սպառնական, նա արձակեց Առաջին Դուժման, որ նրան բաւականաչափ հնազանդ չէր թւում: Նա կամենում էր ծառաների մի պարլամենտ: Ռուսական կառավարութիւնը պարլամենտարիզմը ընդունում էր անուանական կերպով և ոչ իրապէս: Սոցիալիստները կամարիլայի և իր տիրոջ իղձերին պատասխանելու համար, հրատարակեց մի սահմանափակ օրէնսդրութիւն, իմաստակեց ընտրական ցուցակներ, բանտարկեց իր հակառակորդներին և ասպետական կերպով, այս մեծ նախարարը, թոյլ տուեց սև հարիւրակներին և ստորին ոստիկաններին՝ ջարդելու կանանց և երեխաներին: Անցքերը, սակայն, եկան ի դերև հանելու նախարարական հաշիւները: Հակառակ իշխանութիւնների բռնութեանց և ճնշման, Երկրորդ Դուժման երևում էր աւելի արմատական, քան առաջինը: Այստեղ գտնուում էին աւելի քան հարիւր պատգամաւորներ, սօցիալիզմի զանազան երանգաւորումներին (նիւանս) պատկանող: Ընտրութիւնների հետեւեալ օրից իսկ յայտնի էին, որ Երկրորդ Դուժմայի օրերը հաշուած են: Բայց Սոցիալիստ ուղեց լաւ իշխան լինել և լաւ համարեց տանել պարլամենտի պարլամենտները, այն պայմանով միայն, որ սա հաւանքը անելու գոյութիւնը, այն պայմանով միայն, որ սա հաւանքը անելու այն բոլորը, ինչոր կառավարութիւնն էր ցանկանում: Կաղէտները անօգուտ թուլութիւնը ունեցան հետեւելու իր թելադրութիւններին: Նրանք ետ մղեցին ընդհանուր ներման ծրագիրը, մերժեցին պախարակել պաշտօնական սպանութիւնները, չը համարձակուեցին մինչև իսկ շքնորոնել մի բիւտժետ, որի վերահսկողութիւնը զլացուած էր նրանց: Նրանք Ծալրագոյն Զախին աղաչում էին իննայել Սոցիալիստ ամէն մի անհաճոյ խօսք և թոյլ տալ նրան հալածելու ու սպանելու՝ ժպիտը շրթունքներին: Նախարարապետը այնուհետև խաղը դիւրին գտաւ: Նա խուզարկեց պատգամաւորների տները. փողովորդի անունով Դուժմայի լուծումը ցանկացող հեռագիրներ պատրաստեց. գորաբաժնի քննութեան նուիրուած նիւտերի հրատարակութեան ջնջումը պահանջեց. համակրական առաջարկներ ներկայացրեց՝ ոստիկանութեան համար, առատ շնորհներ արաւ՝ կայսեր և պետական սպահովութեան դէմ դաւադրութիւններ գտնելու. միահաղոյն հալածանքներ յայտարարեց՝ առանց քննութեան և յապաղման: Բուրժուազիայի ներկայացուցիչները մինչև իսկ քաջութիւնը չունեցան այդ անսովորութեան տարու իր արժանի պատասխանը, և Դուժմայի լուծումը յայտարարուեցաւ ու կաղէտները չկարողացան ցոյց տալ իրենց առնական կեցուածքի պատիւը:

ՍՕՑԻԱԼԻՉՄԱՆ ՅԱՐԻ ԴԷՄ

Ռուսաստանի կազմակերպուած պրոլետարիատը պարտաւոր է և պիտի տայ պատասխանը: Կուրը ինքնակալութեան դէմ պիտի հետապնդուի առանց զինադադարի և բոլոր երկրներին աշխատաւորների պարտականութիւնն է կրկին օգնութեան հասնել մեր կուռի ընկերներին: Աւստրիական Ռեյխըրատի պատգամաւորները իրենց մտադրութիւնը յայտնել են արդէն՝ հարցապնդելու իրենց կառավարութեան այդ լուծման հետևանքները մասին, որոնց բարդութիւնները տեսնում են արդէն և որ սպառնում է օտար ազգութիւնների շահերին: Փրանսիայի սօցիալիստները առիթը չեն փախցնի յիշեցնելու իրենց կառավարութեան այն փառաւոր խոստումները, որ նա արել է փոխառութեան տեսակէտից: Պարլամենտական աւան-

դուրեան երկիր՝ Մեծն Բրիտանիայի սօցիալիստները յուրիս 14-ին, Բաստիլլի առձան տարեդարձին, ցոյց պիտի սարքեն այն ճի շարք պետական հարուստների դէմ, որոնց հեղինակները փորձել են միայն կեղծիքներով և ստերով արդարացնել: Միւս ազգութիւնների պրոլետարիատները սրտանց նեցուկ կը հանդիսանան շարժման և իրենց կառավարական պետերին կը յիշեցնեն, որ միայն սօցիալիզմն է խաղաղութիւն, որ կարգախօսը մտած է միշտ՝ կորչի՝ ինքնակալութիւնը, կեցցէ՝ Ռուսական Յեղափոխութիւնը . . .

ՄԻՋԱՅՂԱՅԻՆ ՍՕՑ. ԲԻՒՐՕՅԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՕՄԻՏԷ:
(Թարգ. Ա.-Բ)

ԱՐԵԱՆ ԱՅԻԱՐՅԻՑ

Սեւաոր հայրենիքի հալածանքն ու տանջանքը, աւերն ու կողոպուտը դեռ բաւական չէին, որ կատարուեցան 96-ի կարծիր օրերին. բաւական չէին, պէտք է շարունակուէին պարբերաբար, գաղտնի կամ յայտնի, Թահիր փաշայի խորամանկ ու կեղծ քաղաքականութեան տանաձեայ պաշտօնավարութեամբ, որ ժամանակ նա ջանաց հաւատացնել հայ ժողովրդեան և ճանաւանդ նրա աղա համարող դասին թէ՛ ինքը խաղաղասէր և հայրահինամ կառավարող ճշն է: Այո՛, խաղաղ անցաւ, ինչպէս կըսեն, վասնզի նրա օրով քանի ճշ քաղաքական խնդիրներ աչքաթող եղան, երբեմն ամենակարող կաշառքով և երբեմն միայն քանի ճշ զոհեր տալով՝ վերջացան, այսպէս կուզեն ճեղ հաւատացնել ճեր ջոջ աղաներն ու էֆէնդիները, թուլամորթ և շահասէր հարուստները, որոնք իրենց շահերով կապուած էին կառավարութեան: Վասնզի երբ խնդիրը շահու և իրենց կաշիի շուրջը կը դառնայ, այն ժամանակ կուրանան և խնդրի կեղևային երեսը կը չափեն, առանց նրա խորը թափանցելու. այո՛, կուրացան անոնք 1904 աշնան ճանակի կոտորածի և 1905-ի նարեկ գիւղի կոտորածի և աւերի օրերին: Քաղաքական խնդիրը թողունք մի կողմ, վասնզի ասոնք ճեր ջոջ աղաներու և թուլամորթներու համոզմամբ և շահու տեսակէտով իրենց արդարանալի պատճառներն ունին, այն է՝ յեղափոխութիւնն է պատճառ քաղաքական խտուրթիւններուն և աւեր կոտորածներուն: Քաղաքականը իր տեսակէտով, հապա տնտեսակա՛նը, հացի խնդիրը, ընդհանուր աղքատութիւնը, հաճախարակ սոյնն ու անակութիւնը, հասարակութեան ներքին քայքայումն, ասո՛նք ուրից յառաջ եկան: Գիւղացին պարտքերէ զերծ մնաց վաշխաւուրի խեղդիչ ճիրաններէն, սպափատու պէշերու, էֆէնդիներու և ճանաւանդ ճեր ազգային տգրուկ ջոջ աղաներու կեղեքումներէն, հարստահարութիւններէն: Որ օրէնք, ո՛ր արդարութիւն, ո՛ր խիղճ, Թահիր փաշայի ո՛ր հայրահինամ ձեռքը ազատեց ճեղ ճեր դարաւոր դարդերից, ճեր ճով տանջանքներից, ո՛ր գաղթականութեան հոսանքի առաջն առնուեցաւ, ո՛ր աւազակ աշիրաթը զպուրեցաւ: Ընդհակառակն, բարդուեցան ճեր պարտքերը, ճեր տուրքերը, օրինաւոր թէ ապօրինի՝ Գանձուածները՝ պաշտօնեաները, հարկահանները կերան. կերցուցին և փաշային, ու քանի ճշ տանտեսակ տարիներու տուրքեր (վճարուած-անվճար) ճանաւարացան խեղճ քաղաքացու, գիւղացու շինքին և ճեղ այսօրուայ աներանելի վիճակին հատուցին: Կաշառակեր էր Թահիրը. իր սնուկին, փեսաներու, քրոջ որդիներու և ճանթներու որդոց համար միայն կը ճտածէր: Իրան կը հոսէր ամէն գաւառներէն, սահմանազուլէն, ու Պարսկաստանի գիւղերու թալանի կէսը իրեն բաժին կը հասնէր: Մի տեղ որդին, միւս տեղ՝ փեսան, ուրիշ տեղ ճը՝ քրոջ որդին կը

ճճէին ժողովրդի ճուճը և բաժին կը հանէին իրենց հովանաւորողին՝ հայր Թահիրին: Որո՛ւ հոգ թէ ժողովուրդը կամ կառավարութեան սնտուկը պարապ է:

Այլևս ճէկ ճը պէտք էր որ կառավարութեան սնուկին ևս հոգ տանէր, յետնեալ տուրքերը հաւաքէր: Ժողովուրդը օրինական կերպով պէտք էր փճացուէր, հայն՝ առանց հացի, տուն տեղի, հայաստանը՝ առանց հայի թողնուէր: Զէ՛ որ հայի դրամով կառավարութեան սնտուկը, և հայաստանը՝ թիւրք, չերքէզ գաղթականներով պիտի լեցուի: Եւ ո՛վ պիտի լինէր ա՛յն ճարդը, որ իրագործէր այս տանտեսակ տարիներ առաջ ճրագրուածները. ո՛ր ճարգ գազանը պիտի ունենար այն ճեռներէցութիւնը և կատարէր այս ամենը առանց աջ և ահեակ նայելու, առանց խղճի, առանց ճարգկային ու և է զգացումի, անխիտ, անգութ, գազանէ ճը աւելի արինկզակ քան Ելլաղզի հովանաւորեալը, արիւնով մկրտուած և կարծիր սուլթանի կարճիր սան Ալի պէշը որ ուխտած է հայ տարեգրութեանց վրայ նոր անկիւնաքար ճը, անջինջ սև յիշատակ ճը թողուր:

Քան և հինգ տարուայ մնացորդ տուրքերը կը հաւաքէ, որոնց մեծագոնը վճարուած և ընկալագիրները առնուած, բայց 96-ի կոտորածին այրուած, կորուած են: Գուր կենդանի ճարդուն, լա՛ւ. տո՛ւր. հեռացողին՝ լա՛ւ. տո՛ւր գաղթողին համար. տո՛ւր և մեռնողին համար (էօլիւտէն տա խարա՛ճ), այո՛, մեռեալից էլ կառնեն. կառավարութեան վերկին է. չէք տա՛ր, — ըսեցէ՛ք:

Անխնայ կը գանձուին, տուններ կը ճտնեն առանց տիրոջ իճաց տալու, պարտքի քանակը ցուցնելու: Աճէն տեղ խուզարկութիւն, ընտանեկան սրբապղծութիւն, պողատու ճուներ, օրօրոցներ, թոնիրներու քարեր, քուրջեր, որբեայրիներու օրապահիկ հացն ու ճաւար-կորիկտաւ, ճճեռուան պարէնը, առատաղներու գերաններն կը քանդուին, կը ճախուրին, ճէկ տաններու գնով. ո՛վ է առնողը, — իրենք ճախողները և առհասարակ թիւրքերն ու քերտերը: Գիւղացուց վրայ հարստահարութեանց ճափն անցաւ. կանայք լիւրեցան, երեխայք ճճուեցան, ճարդիկ խեղդուեցան, կախուեցան աղ բանոցներու վրայ: Մալ-տաւար, ոչխար ճմնաց՝ քաղաք բերուեցաւ և ճախուեցաւ: Պարսքը որո՛ւն է, սաղանքը որո՛ւն՝ նայող չկայ: Գոնիւրներուն, առաջնորդարանին և այլ տեղերու դիճուճ ընողները իբր ֆէսաա (խոտկարար) ճերբակալուած՝ բանտերու խորերը կը տանջուին: Նոր Գիւղի ճէսը, հայոց Զորի քանի ճը գիւղերու ճէսները դեռ բանտն են: Առաջնորդարանի քանիցս խնդրանքներու վրայ քաղաքական ժողովը հրաճարական տուաւ: Աղթամարի կաթողիկոսութեան տեղապահը Պօլիս հեռագրեց. ամէն ինչ ճուր անցաւ, և սովալուկ գայլը ա՛լ աւելի խտտացուց գանձելու եղանակը: Ոչ ոքի չսեղ, ոչ ոքի չինայել, — այս է Ալի պէշի նշա. նաբանը և իր տուած երդումն ու խտտուճը Ելլաղզի արիւնտ ճարգասպանին: Մինչև իսկ Փրանսական գոնիւրի թարգման Միհրան էֆ. Թարկուեանից ևս պահանջեց նրա թէճէթիւլի (վաստակի) տուրքն, ինչ որ գոնիւրը հրաճայած էր չտալ՝ իբր ապօրինի պահանջ: "Սուգիաս կիտի ուր կիաս" *) առաճը լաւ ըճբուած է կուսակալը: "Գոնիւր քիճ տիյնէ՛ր". հրաճայեց թահախարներին տուն ճտնել և սպրանքը քաշել: Գոնիւրը իմանալով անոնց փորհուրդը, իւր թիւրք գաւաղը դինեց և թարգմանի դուան վրայ պահապան դուան հրաճայելով արգիւլէ ներս ճտնողին և հակառակ պարագային կրակել ոտիկաններու վրայ: Առջի օր թահախարները բաւականացան դուան քանի ճը հարուած տալ և հեռանալ, ըսպատելով և յուսալով որ կարող են գանձել՝ Միհրանին պատահելով: Բայց միւս օրը նոր հրաճանով աւելի հեռապղեցին դուա կոտորելուն, սակայն արգելքի. հանդիպեցան: Այլ

(* Ժողովրդական առած է, որ սրախօսաբար կկորճամուր:

կերակին (ճարգազարդին) ռուսական և ֆրանսական գոն- սիւլները՝ իրենց թարգմաններով, երևի այդ խնդրով, կուսա- կալի քոչու էին, ճինչև երեկոյեան ժամը 11ը: Անկէ վերջ երկու գոնսիւլները տուն վերադարձան: Քիչ վերջ, երկու թարգմաններն ևս կառքով վերադարձան: Ոստիկանները Միհ- րանին կապատէին: Կառքը անցաւ Քաջ փողոցի ոստիկանա- տընից, հոն ուզեցին բռնել, բայց որովհետև հոն հրապա- րակ էր, թողին ճինչև որ կառքը անցաւ փոքր Քէնտրջին, ուր կը գտնուի ռուսական և ֆրանսական գոնսիւլներու տները և ֆրանսական թարգմանի տունը, 30-40 քալ հե- ուստրութեամբ: Ոստիկանները կառքը սանձեցին և կեցու- ցին: Ռուսական թարգման Մարտիրոս էֆ. (Մշէցի) հրամա- յեց իր գաւազին և կառապանին խփել ոստիկաններուն. ոս- տիկանները տեղի չտուին և Միհրանը կառքից վար բերելով քաշկրտեցին, չնայած որ գաւազը կարգիլէր ի զուր: Միհ- րան շնչասպառ ոստիկաններու ձեռքերէն կը տարուէր: Հո- դաթաւար: Գոնսիւլները լսելով անմիջապէս վրայ հասան և բա- ւական յոգնելէ ետք՝ հազիւ ազատեցին և կառք դնելով կու- սակալին գացին: Իշխերը երկար ատեն մնացին կուսակալի քով այդ խնդրոյ համար ու ճիւս օրը հեռագրեցին իրենց դեսպաններուն և վերջացաւ խնդիրը՝ այլևս դեսպանական և եղբարի կարգադրութեան թողնուելով: Միհրան քանի ճը օր հիւանդացաւ. կառապարական բժիշկները նայեցին և ձեռուե- լու կամ քաշկուտուքի արդիւնք ըլլալ հաստատեցին: Այնու- հետև քանի ճը օր գոնսիւլները զինուած գաւազներով պտը- տեցան, ցուցնելով թէ իրենց անձին ևս վտանգ գայ:

Ահա՛, սիրելի ընթերցողներ, երևակայեցէք բռնութեանց չափն ու սաստկութիւնը, որ ճինչև իսկ կը բարձրանայ օ- տար գոնսիւլի թարգմանի վրայ, ո՛ւր կը մնայ ուրեմն գիւ- դերու ծով խորշերու ձէջ կատարուած ահուկի վայրագու- թիւնները... Այո՛, տխուր է իրականութիւնը: Եղբուքիւն- ները շատ ու այլազան են, ձէկը ձէկէն աւելի աղէխարշ, սրտաձճիկի, որոնց ի տես ա՛յ անկարելի է տուկալ, համբերել պաղարին ու անդրայ անտարբերութեամբ:

Իսկ Աղթամարի դէպքին: Ախլաթի քանի ճը գիւղեր աւերի ու կոտորածի էին ճառնուած: Կարկառի ձէջ երկու յեղափոխականներ երեցած լինելուն համար՝ գիւղը կայքը- ՚ւի: Յեղափոխականներէն ութը հոգի փախչելով՝ Աղթամար կապատանին: Կառավարութիւնը կը հետապնդէ. 4-500 զօրքով կղզին կը պաշարէ: Սարսափի օրեր էին, ժողովուր- ղը կճախք դարձաւ, կոտորածի ուրուականը կանխատեսելով: Նուազանգիստները պաշարուեցան, բոլոր նաւերը բռնը- ւեցան և զօրքերով լեցուելով՝ ծովը պատերազ ձական դրու- թեան տակ դրուեցաւ: Լաւ փաստ էր կուսակալին համար, իր փնտռածը այդ էր. ֆրանսական թարգմանի խնդրի տաք մի- ջոցն էր և Միհրան հիւանդ: Ռճբակոծութիւնը սկսուեց, ե- կեղեցիներ, շէնքեր աւրուեցան, զօրքը նաւերով առաջացաւ կղզին, սակայն ցամաքի ձօռեցած և ցամաք ելնելու պա- հուն ընդդիմութեան հանդիպելով և երկու զինուոր վերաւոր ու ձեռած թողնելով՝ շուտով նաւերը յետ ձրուեցան, նոր և աւելի ուժերով յարձակում գործելու: Առջի օր ընդդիմութեան հանդիպելով՝ զիշերը ամբողջ նաւերը լուսավառ վիճա- կով ծովի վրայ խուզարկութիւն կը կատարէին, չըլլայ որ փախչէին, սակայն ճեր բաղդից ութը զինուորները կը յաջո- ղին փախչել և ցամաք ելնել: Չինուորականութիւնը յաջորդ օրը փտաս հիւ որսի ձեռք ձգելուն՝ նոր թափով և ուժով յարձակում գործեց կղզիի վրայ և այս անգամ ընդդիմու- թեան չհանդիպելով՝ ցամաք ելաւ, «Փատիշահը չօք եաշա» սալավաթը կանչեց և յաղթական «ճարշ»ով սկսեց անխնայ գնդակահարել շէնքեր և ապառաժներ, կարծելով թէ յեղա- փոխականները ներսը պահուած կը լինին: Մխալուած էր իր որսի ճասին, ալ կը մնար իր թոյնը թափել շէնքերու, ե-

կեղեցական անօթներու և սպաններու վրայ: Սրբապղծեցին տաճարը, թալանեցին Աղթամարի հարստութիւնները, շուր- ջառներ, փիրոններ, թագեր՝ բղկոտեցան, կոտորուեցան, ար- ծաթեղէնները աւարի առնուեցան, կորուստը քանի ճը հա- ղարի կը հասնի:

Ընթերցողներս, պահ ճը ձեզ դարձէք, այս արեան աշ- խարհի, բոց ու աւեր վաթանի, չոր ու ցամաք զիւղացու կեանքը ճողաբերեցէք: Հալածանքը իր սաստկութեան է հա- սած: Սովը կը ճարակէ: Յիշեցէք Վասպուրականը, ան ար- եան օրերի ձէջ է:

ՄԱՐՏԻԿ
29 (հ. տ) մայիս 1907
Վ Ա Ն

ՆԱՄԱԿ ՄՈՒՇԻՅ

Երկրի նեղութիւնը աննկարագրելի է, ցորեանի բի- լէն ինն մէճխու երկու ոսկիի ելած է և կկկը՝ 120 զու- րուշի. բնականաբար, այս տարի ալ ցանելու համար ներմ չպիտի ըլլայ և յաջորդ տարին ալ նեղութիւն պիտի կրէ ժողովուրդը:

Ցաւ ի սիրտ կը յայտնեմ, որ Պուլանըխի և Խլա- թայ բոլոր գիւղերն ու Բաղէշի շրջակայքը տեղական կուսակալին դիմելով, թէրբի թէպաա (հպատակութիւնը ձգել) կընեն, և կը վճարեն իրենց պարտքը; զոր ունին կառավարութեան ու ապա՝ ներկայանալով ռուսական հիւպատոսին, կարճանագրուին ռուսահպատակ հետըզ- հետէ գաղթելու համար: Անցեալ տարուայ սկստեմբե- րին այդ հրամանն եկած է կուսակալութեան, որ այլևս գնացողներուն արգելք չըլլար. ճիւս կողմէն անտանելի հարստահարութիւնը ժողովուրդը փախչելու և դաղ- թելու կատիպէ. այս հոսանքը կը տարածուի գաւառներ ու գիւղեր: Իրողութիւնը պատրիարքին հաղորդուած է որպէսզի փութայ առաջն առնել, այդ երկրուեր շարժ- ման: Բայց ի զուր:

Ուրիշ կողմերէ ալ կիմացնեն ձեզի, թէ երկիրը կա- մայանայ և Հայաստանի կեղրոնական գաւառները հա- յերէ կը պարպուին և թուրք գաղթականներով կը լեց- ուին:

25 Մայիս, 1907, Մուշ ՏԱՐՕՆՅԻ

ԲԱՂԷՇԻ ՎԻՃԱԿԸ

Կ. Պոլսից, յունիս 26-ից, երոպական թերթերին հեռա- գրուած է հետեւեալը. —

Մշոյ դաշտում թուրք զօրքերը ցրուեցին ճի խուճը. հա- յեր, որ իրենց վրան էին յարձակուել և իրենցից 7-ը զին- ւար և ձէկ սպայ սպանել: Ճարձակուող հայերից սպանուած են 20 հոգի: Թուրք և քուրդ խուճանը աւարել է չորս հայ գիւղեր:

Մշոյ դաշտի հայերը կատարեալ արհաւիրքի ձէջ են: Սպանուող հայերի թիւը կան, թերթեր որ հասցրին 700-ի: Նոյն՝ այդ թերթերի տուած տեղեկութիւններից երևում է, որ Բաղէշի ձէջ ճանը խուճուութիւններ են տեղի ունեցել: Հինգ հազար թուրքեր յարձակուել են վալիի վրան. վերադ- րել են և «խօճախ»ից զուրս վտարել: Ժողովուրդը կտոր-կտոր է արել ոստիկանապետին և վալիի կողմնակիցներին խիստ

Հարածանքի ներարկել: 24 ժամ շարունակ հեռազրահան-
 եակը ապստամբների ձեռքին է մնացել: Բաղաբի կառա-
 վարութիւնը անցել է դիւնուորական հրամանատարի ձեռքը:
 Խռովութեան իսկական պատճառը այն է, որ վալին
 ստակալի կերպով կեղեքել է անխտիր թէ քրիստոնեային
 և թէ ճահճեղականին:

Տրապիզոնի վալին Բաղէշ է ուղղուած քննութեան համար:

ՆԱՄԱԿ ՍՕՒՈՒՄԻՑ

Վերջերս Տաճկաստանի Սև Մոլի ամիերէն Հա-
 րիրաւոր Հայեր կուզան և կը ցրուին Սոխումի շըր-
 ջանները: Մանրամասնութիւնը յետոյ, միայն այժմ այս-
 քանը ըսեմ, որ վերջին անգամ եկողները 178 հոգի երկ-
 սեռ 2-70 տարեկան գաղթական Հայեր են: Արտա-
 գաղթին կողմէն տաճիկ կառավարութեան սիւվարիներն
 և Ղարա-Բօղազում գտնուող պահակախումբը: Գաղ-
 թականներն վերին աստիճանի աղքատներ են,
 մերկ և բոքիկ:

17 Յունիս, 1907, Սոխում. ԿՈՐԻԻՆ

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ

Հալէպի թեղանօթաձիգները և հեծելազորքերը Պուլարա-
 կան սահմանը ուղարկուելուն պատճառով, կառավարութիւնը
 ուղեց անոնց տեղը իջնել Արաբ նոր դիւնուորներ հաւաքե-
 լով: Արաբները խիստ ընդդիմադրութիւն ցոյց տուին, կա-
 ռավարութիւնը անկարող եղաւ խիստ միջոցներու դիմել,
 ուստի առայժմ ձգձգումի քաղաքականութեան կը հետևի:

Եմէնէն դարձող զօրքերը Իսկէնուէրունի մէջ մեծ խռ-
 վութիւն հանեցին՝ իրենց ամասկանները չարուելուն համար:
 Փաշան ձեռնեցին և քաղաքը կողպտելու պատրաստուեցան:
 Խռովութեանը վերջ տալու համար՝ տոխպուեցան տեղէ մը
 10,000 սակի, տոկոսով, փոխառութիւն անել և զօրքերուն
 վճարել, — այս կերպով վերջ ստացաւ այդ «ապստամբութենն»
 ալ: Տեսնելու էր թէ ինչպէս զօրքերը բարձրաձայն, հայ-
 հոյակից բառերով կուխտէին որ ո՛չ թէ իրենք այլևս վիւ-
 արութեան չեն երթար, այլ իրենց որդիներուն ալ արգելք
 կը հանդիսանան: Բէտիֆ զօրքերը սկսած են ցրուել:

2 Յունիս, 1907, Կիլիկիա. ԿԻԼԻԿԻՅԻ

ՄԻՉԿՈՒՍԱԿՅԱՎԱՆ ԽՆԳԻՐՆԵՐ

Հայ «Յեղափոխական Կօնգրէսը» միակ ազդու և
 կարուկ միջոցն էր, որով կարելի պիտի լինէր միջ-
 կուսակցական թշնամութիւններին վերջ տալ և ընդ-
 հանուր համերաշխութիւն ստեղծել, զէթ էական
 խնդիրների նկատմամբ, Տաճկա-Հայ Դատի լուծմանը
 աշխատող Հայ յեղափոխական կուսակցութիւնների
 միջև:

Ընկեր Մուրատի առաջարկը զայիս էր մի ան-
 յետաձգելի պահանջի բաւականութիւն տարու:

Կուսակցութեանս Կեդրոնական Վարչութիւնը
 «Հայ Յեղափոխական Կօնգրէս»ի գաղափարը սկզբուն-
 քով ընդունեց, և այդպէս էլ յայտարարեց, կան-
 խապէս հաւատացած լինելով, որ ընկեր Մուրատի

առաջարկի առաջ կարևորութիւնը և անհրաժեշտու-
 թիւնը պիտի գնահատուէր թէ՛ հասարակութեան և
 թէ՛ յեղափոխական կուսակցութիւնների կողմից:

Ու մենք չսխալուեցանք:

Հայ ժողովրդի չէզոք ծափ արտայայտած ցանկութիւն-
 ները, կուսակցական և ոչ կուսակցական շատ թերթերի
 գրածները, ինչպէս և զանազան տեղերից մեր ստացած
 նամակները, եկան հաստատելու որ «Կօնգրէս»ի գուճա-
 րուճը, համերաշխութիւնը դարձել էր հրամայական
 մի պահանջ, որ այլևս չէր կարելի անտես անել:

Ընդհանուր տրամադրութիւնից բացմտութիւն
 կազմեց Հայ Յեղ. Դաշնակցութեան վերջին
 Ընդհանուր Ժողովը, որը այդ մասին հակակարծիք
 լինելով, դրել է իր պատճառարանութիւնները:

Մեր պատասխանը տարուց առաջ, նախ տալիս ենք
 Հարգատ պատճէնը այն գրութիւնների, որ մեր և
 Դաշնակցութեան մէջ տեղի է ունեցել այդ և յարա-
 կից խնդիրների առթիւ: Իսկ այդպէս վարուճ ենք
 նրա համար, որովհետև Դաշնակցութեան վարիչ
 մարմինը մեզ հրապարակով պատասխանեց:

Կուսակցութեանս Կեդրոնական Վարչութիւնը
 (16 մարտ 1907, թ. 6/48) հետևեալ գրութիւնն է ուղղել
 Հայ Յեղ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին:

**ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԿԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
 ՊԱՏՂԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ**

Յարգելի Հայրենակիցներ,

Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը
 անկեղծ սրտով շնորհաւորելով Կուսակցութեանդ Պատգամա-
 ւորական Ժողովի գուճարուճը, սրանով զայիս է Ձեր ուշա-
 դրութիւնը հրաւիրելու հետևեալ կարևոր խնդիրների վրայ:

1).— Հնչակեանների և Դաշնակցականների միջև տեղի
 ունեցած մի կարգ որբալի ընդհարումները և սպանութիւնները ա-
 ռիթ էին տուել Կուսակցութեանս Հինգերորդ Պատգամաւորական
 Ժողովին բանակցութեան մէջ մտնելու Կուսակցութեանդ Ա-
 ընտանի Բիւրօյի հետ՝ միջնակուսակցական բաղխումների ա-
 ռաջն առնելու նպատակով:

Այդ նկատմամբ երկուստեք եղած Հարորդադրութիւնները,
 որքան որ լի բարի ցանկութիւններով և իղձերով, սակայն,
 դժբաղդաբար, որոշեալ մի արդիւնքի չհասցրին, ու եղբայրա-
 սպանութիւնը շարունակեց գոյութիւն ունենալ:

Իրերի այդ ցուապի դրութիւնը աչքի առաջ ունենալով՝
 Կուսակցութեանս Կեդրոնական Վարչութիւնը, թիւ 356 իր
 նամակով պարտականութիւն համարեց նորից Արևմտեան Բիւ-
 րօյի ուշադրութիւնը հրաւիրելու կատարուած կուսակցական
 չարքների վրայ և, ի թիւս այրոց, առաջարկելու «Հնչակեան և
 Դաշնակցական լիազօր անձնաւորութիւններից իրաւախօհա-
 կան մի առեան կազմել, որ իրեն նպատակ ունենար, փոխա-
 դարձ համաձայնութեամբ, որոշ տրամադրութիւններ ճշակելու
 և անհրաժեշտ յանձնառութիւններ պարտաւորիչ դարձնելու,
 որպէսզի այլևս երկու կուսակցութիւնների միջև չջառաջանան
 եղբայրասպանութիւններ և զանազան ցուալի դեպքեր»:

Կուսակցութեանդ Արևմտեան Բիւրօն թիւ 59-ը իր պա-
 տասխանադրով՝ սկզբունքով մեր առաջարկին դէմ չլինելով,
 յայտնած էր որ այդ խնդիրը «քննութեան պիտի ենթարկուի
 յառաջիկայ Ընդհանուր Ժողովում»:

Այժմս՝ երբ Ընդհանուր Ժողովը գուճարուած է՝ Կեդրոնա-
 կան Վարչութիւնս Հայ Յեղափոխութեան վեհագոյն շահը աչքի

առաջ ունենալով, իր պարտականութիւնն է համարում գրել և ժողովրդի ուշադրութիւնը հրաւիրել այդ խնդրի նկատմամբ:

Լիալոյս ենք, որ դուք ո՛չ ճիշտ չէք զանալ Միջնորդ Դատարանի սկզբունքը ընդունելու և պարտաւորիչ դարձրելու Ձեր բոլոր ծարմիրների համար, այլ և կծշակէք կանոնական յատուկ տրամադրութիւններ և ձեռք կառնէք առանձին ճիշտներ ճիշտակուսակցական ընդհարումներին և եղբայրասպանութիւններին ճի անգամ ընդ ճիշտ վերջ տալու:

Այդ նկատմամբ ձեր վրայ ընկած պարտականութիւնը ճինջե ցարդ մենք կատարած ենք և պատրաստ ենք կատարելու, նոյնը Ձեզնից յուսալու իրաւունքով:

2. — Աչքի առաջ ունենալով բռնութեան լծի տակ հեծող Հայ ժողովրդի իրաւացի և հրամայական պահանջը. աչքի առաջ ունենալով այն դժուար հանգամանքները, որ թուրք բռնապետութիւնը և նրա նեցուկ եղողները ստեղծել են Հայկական Դատի համար, աչքի առաջ ունենալով և այն տխուր իրողութիւնը թէ ինչպէս ձեր մէջ տիրող միջնակուսակցական անտեղի կռիւները և փոխադարձ ընդհարումները թուլացնում, ջլատում և փրատում են Հայ յեղափոխական գործի յաջողութեանը՝ կուսակցութեանս Կեդրոնական Վարչութիւնը ամենայն պատրաստակամութեամբ ընդունեց ընկեր Մուրատի առաջարկը («Հնչակ» թիւ 9-10, 1906), այն է՝ կազմել մի «Հայ Յեղափոխական Կօնգրէս», որին մասնակցէին Ցաճկահայ Դատի լուծմանը աշխատող բոլոր Հայ Կուսակցութիւնները:

Քաջայոյս ենք, որ Պատգ. ժողովդ այդ առաջարկը ևս խորհրդակցութեան առարկայ կդարձնի և իր կողմից էլ Հնարաւոր ամէն ճիշտներ ձեռք կառնի, Հայ Յեղափոխութեան այդ կենսական պահանջին շուտափոյթ բաւարարութիւն տալու:

Հաճեցէք ընդունել ձեր ընկերական ողջոյնները և ձեր յարգանաց հաւաստիքը:

Ի դիմաց ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ատենադպիր (կնիք) Ատենապետ (ստորագրութիւն)

Հայ Յեղ. Դաշնակցութեան Արևմտեան Բիւրօն (15 յունիս 1907) մեզ տուել է հետևեալ պատասխանը:

ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՊԱՐԻՋ

Յարգելի Հայրենակիցներ,

Ի պատասխան Ձեր պաշտօնական դիմումի, ուղղւած Հ. Յ. Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր ժողովին, ներփակ ուղարկում ենք «ԴՐՕՇԱԿԻ» համարը, ուր սպազբւած է (երես 74) ժողովի պաշտօնական պատասխանը:

Լիալոյս ենք, որ միջկուսակցային ատեանի հաստատումով կարող կլինինք հասնել Ձեզ և մեզ ցանկալի նպատակին, — վերայնել կուսակցական անախորժ և փնասակար ընդհարումները և ճանապարհ բանալ՝ մօտ ապագայում համերաշխ գործունէութեան համար:

Ձերմ յարգանքներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻԻՐՕ
(կնիք)

ՄԵՐ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Արևմտեան Բիւրօն լիալոյս է, որ միջկուսակցական ատեանի հաստատումով կարելի կլինի ո՛չ միայն կուսակցական անախորժ և փնասակար ընդհարումները վերացնել, այլ և մօտ ապագայում համերաշխ գործունէութեան համար:

րումները վերացնել, այլ և մօտ ապագայում համերաշխ գործունէութեան հասնել:

Որ միջկուսակցական ատեանի հաստատութիւնը կատարեալ մի պահանջ էր դարձել, — դրա մասին կասկած անգամ չի կարող լինել: Այդ հաստատութեամբ այսուհետև կարելի պիտի լինի շատ չարքաների առաջն առնել և չթողնել որ յեղափոխական գործը տուժի անգիտակիցներ ի և անպարտաճանաչներ ձեռքից:

Հնչակեան և Դաշնակցական մարմինները այսուհետև ունեն մի հաստատութիւն, որով կարող են լուծել իրենց մէջ եղած միջկուսակցական վէճերը. Հայ յեղափոխութեան շահը պահանջում է, որ երկուստեք ոչ մի անկեղծ ջանք չխնայուի այդ հաստատութեան դիմելու հարկաւորած դէպքում և նրան պէտք եղած ծաւալը ու զարգացումը տալու:

Դաշնակցութեան Ընդհ. ժողովը իր որոշումներով Հայ Յեղ. Կօնգրէսի գումարումը ներկայումս համարում է «վաղաժամ»:

Մենք տրամադծօրէն հակառակ ենք այդ կարծիքին, ո՛չ ճիշտ այդպիսի մի Կօնգրէսի գումարումը վաղաժամ չէ, այլ շատ ու շատ ուշ է մնացած:

Բաւական է լինել անկեղծ, բարձր կուսակցական նեղ թելադրանքներից, աչքի առաջ ունենալ Արևելեան Խնդրի ժամանակակից բնաւորութիւնը, թուրք բռնակալութեան հայ ժողովրդի համար ստեղծած դրութիւնը, մօտիկ ժամանակներում գալիք բարդութիւնները և Հայ յեղափոխական ոյժի բոլորովին անհամապատասխան լինելը, — որպէսզի պարզ իրականութիւն լինի այն, որ Կօնգրէսի գումարումը արդարև անյետաձգելի է և հըրամայական:

Եթէ մեր մէջ կայ մի կուսակցութիւն, որ կարծում է թէ ինքը արդէն մթերած ունի կամ կարող է մթերել բաւականաչափ ոյժ՝ Հայկական Հարցի յեղափոխականապէս լուծմանը բաւականութիւն տալու չափ — նա ինքը չարաչար սխալւում է և սխալեցնում է ուրիշներին էլ:

Արաբների աշխարհագրական դիրքը, նրանց մասսայական զինումը, ռազմամթերք ունենալու յարմարութիւնները, ինչպէս և շահագրգիռ պետութիւնների բացայայտ օգնութիւնը մենք չունինք և դժուար թէ կարողանանք էլ ունենալ, եթէ իրերի ներկայ ընթացքը շարունակուի:

Ունենք մենք Մակեդոնական Խնդրի լուծմանը աշխատող յեղափոխական կուսակցութիւնների ոյժը և նրանց բազմապիսի յարմարութիւնները: — Բնաւերբէք:

Եթէ յեղափոխութիւնը մի միջոց է, որով կարող պիտի լինինք հայ ժողովրդին ազատել սուլթանական բռնութիւններից — ինչո՞ւ քաջութիւն չունենալ խոստովանելու, որ այժմ մենք պահանջում ենք այդ

ոյժը չունինք: Խոստովանի՛նք որ չունինք, և միջոցներ գտնենք ունենալ, և ահա այդ միջոցներինց մէկն է Հայ Յեղ. Կօնգրէսի գումարումը և կուսակցութիւնների ընդհանուր համերաշխութիւնը՝ գէթ մի քանի անցետաձգելի բնաւորութիւն ունեցող տեխնիքական խնդիրների մասին:

Մեր անդրդուելի համոզումն է, որ հայ ժողովուրդը պէտք եղածինց աւելի ոյժ ունի իր ծոցի մէջ, իր Դատը առաջ տանելու, բայց կուսակցական խռովութիւնները, կուսակցական ջլատումները, եղբայրասպանութիւնները . . . ամէն ինչ չէզոքացնում և ամրութեան են դատապարտում:

Մենք այստեղ տաննեակ օրինակներ կարող էինք բերել, հաստատելու համար թէ ինչպէս կուսակցական ճղճիմ հաշիւները ո՛չ միայն վնասում, ո՛չ միայն վտանգում, այլ պարզապէս սպանում են Հայ Յեղափոխական Գործը: Ռուսների, վրացիների, լեհերի . . . մէջ էլ կան քաղաքական կուսակցութիւններ, բայց նրանք երբէք չեն գործում կուսակցական այն չարիքները, ինչոր կատարում է մեր մէջ: Նրանց կուսակցական կեանքը կանոնաւորուել է, մերը դեռ ամէն ինչ խառնի խառն, և բուն նպատակից շեղուող բնաւորութիւն է ստացել:

Ու եղբակացնում ենք, որ Հայ Յեղ. Կօնգրէսի շուտափոյթ գումարումը աւելի քան անհրաժեշտ է, մենք այնտեղ աւելի լաւ իրարու կարող ենք հասկանալ, քան թէ պաշտօնական նամակներով և հրապարակային գրութիւններով:

Ինչո՞ւ համար Դաշնակցութեան բարձրագոյն մարմինը «վաղժամ» է համարում հայ կուսակցութիւնների Կօնգրէսի գումարումը, երբ իր կուսակցութիւնը արդէն կօնգրէսներ է գումարում և գումարելու առաջարկներ է անում թուրքերին, քրդերին, ալբանացիներին. ինչո՞վ բացատրել այդ:

Եթէ մի ինդրի առթիւ հասկացողութեան գալու համար կարելի է թուրքերի հետ երկու անգամ ժողովի գալ, կարծում ենք որ մի անգամ էլ կարելի է գալ և՛ հայ կուսակցութիւնների հետ, այդտեղ երկրորդ կրելու ոչինչ չկայ: Առ առաւելն կարող է լինել անհամաձայնութիւն, որի պատճառը պաշտօնապէս կպարզուի և հասարակութեան առաջը կդրուի: Բայց ինչո՞ւ չկարծել թէ կարող է լինել և՛ համաձայնութիւն, գէթ կենսական նըշանակութիւն ունեցող խնդիրների մասին: Միթէ՞ մենք իրարուց այնքան խորթացել ենք, որ հասարական մի գործի մասին իրարու մօտ պաշտօնապէս գալ և խօսել չենք կարող:

Իր նկատումների երրորդ կէտի մէջ Դաշնակցութեան բարձ. մարմինը ասում է, որ հայ յեղափոխական կուսակցութիւնների կօնգրէսի հարցը լուրջ նշանակութիւն կարող է ունենալ այն դէպքում միայն, երբ Երկրում, բացի Դաշնակցական մարմիններից, գոյութիւն կունենան Հնչակեան և այլ յե-

ղափոխական մարմիններ էլ:

Եթէ այդպիսի մի կարծիք կուսակցական նեղ հաշիւներից է բղխում, — դա լուրջ նշանակութիւն չի կարող ունենալ, այնպիսի մի մեծ խնդրի առաջ, որպիսին է Հայ Յեղ. Կօնգրէսի գումարումը: Իսկ եթէ դա ասում է որպէս փաստ, որպէս իրողութիւն, այն ժամանակ մենք հակադրում ենք մեր բացարձակ հերքումը և յայտարարում որ դա բոլորովին սխալ է:

Եթէ այդպիսի մի կարծիք երևան դուռէր Կօնգրէսի մէջ, մենք ամենադիւրին միջոցը կունենալինք հաստատելու, որ Երկրի մէջ ո՛չ միայն Հնչակեան մարմիններ կան, այլ տեղ տեղ նրանք թէ թուով և թէ որակով գերազանցում են դաշնակցականներից, թէև կան տեղեր էլ, որ Դաշնակցականները մեղանից շատ են:

Ճարբերութիւնն այն է, որ այլ է երկրի մէջ ունենալ յեղափոխական մարմիններ մեր տեսակէտով, այլ՝ Դաշնակցութեան:

Աւելի քան տարօրինակ ենք գտնում Դաշնակցական Բնդհանուր Ժողովի այն տրամաբանութիւնը, որ ասում է թէ Հնչակեանութեան և Դաշնակցութեան մէջ համերաշխ գործունէութիւն կարող է տեղի ունենալ միայն այն դէպքում, երբ Հնչակեան տեղական մարմինները իրենց առօրեայ ընթացքով և յեղափոխական գործունէութեամբ վստահութիւն կներշնչեն դաշնակցական մարմիններին:

Այստեղ անշուշտ հարց է գալիս, թէ արդեօք Դաշնակցութեան տեղական մարմինները, որպէս յեղափոխական կազմակերպութիւններ, վայելա՞ծ կամ վայելո՞ւմ են Հնչակեան տեղական մարմինների վստահութիւնը: Պատասխանն է որ՝ ոչ:

Միւս հարցն է՝ թէ արդեօք դաշնակցական մարմինների առօրեայ ընթացքը և գործունէութիւնը յեղափոխական գործունէութիւն նկատուե՞լ է Հնչակեանութեան կողմից: Հէնց խնդիրն էլ այն է, որ Դաշնակցութեան ընդգրկած գործունէութեան եղանակը Հնչակեանների կողմից նկատուել է աւելի վնասակար, քան օգտակար, աւելի հակայեղափոխական՝ քան յեղափոխական: Դանի որ Դաշնակցութեան «ցուցական» տաքտիկան Հնչակեանութիւնը համարում է սխալ, անհամապատասխան և հետևաբար վնասակար հայ յեղափոխական գործի շարժողութեանը, — ուրեմն այդտեղից էլ պիտի յառաջանալին փոխադարձ անվստահութիւններ, ընդհարումներ և նոյն իսկ թշնամութիւններ: Սա պարզ չէ՞: —

Իսկ թէ ո՞ր կուսակցութեան տաքտիքական հայեցակէտերն են ուղիղ և համապատասխան իրականութեան — դա աւելի կպարզուէր Կօնգրէսի մէջ, քանի որ այնտեղ աւելի ազատօրէն կարելի էր խօսել:

Այնուամենայնիւ՝ մենք կարծում ենք որ այժմս աւելի դիւրութեամբ կարող ենք հասկացողութեան գալ ընդհանրական մի քանի կարևոր խնդիրների մասին:

Առաջ Հնչակեան և Իաշնակցական տեղական մարմինները իրարու հակառակում, իրարու թշնամանում էին, որովհետև մին սօցիալիստ էր, միւսը՝ ոչ-սօցիալիստ: Այժմս երբ Իաշնակցութիւնը Հարկադր-ւեցաւ սօցիալիզմը անբաժան նկատել Հայկական Իատից էր, ասել է թէ հա մ ե բ ա շ ի՛ վ ո Ր Ճ ու ն է ու թ ե ա ն խոչնդոտ հանդիսացող ազդակներէց մի մեծը վերացել է:

Մնացել է «ցուցական», եղանակը, որ Իաշնակցութիւնը նորից ընդգրկել է, թէև մի ժամանակ իր «տեղական մարմինները» յայտարարում էին թէ թողել են — այդ «ցուցական» գործունէութիւնը մենք նկատում ենք աւելի վնասակար, քան օգտակար: Յեղափոխուող ազգերի պար-մութիւնը, Հայ չեղափոխութեան մօտիկ անց-եալը ասում է, որ ո՛չ միայն մենք չենք սխալուում, այլ մեր ասածը պարզ մի ճշարտութիւն է և հե-տևանք այն իրականութեան, որի մէջ մենք ապրում ենք, ինչպիսի իրականութեան մէջ երբեմն ապրել են մեզ նման ուրիշ ազգեր էլ:

Մրանք խնդիրներ են՝ որոնց կարելի է համար-ձակութեամբ մօտենալ միայն Կօնգրէսի մէջ, և յոյս ունենք որ «Հայ Յեղափոխական Կօնգրէսը» գումարուելով այդ խնդիրներին վերջ կտայ և փոխադարձ համերաշխութիւն ու հասկացողութիւն կբերի:

Մեր համոզմունքով Հայ Յեղ. Կօնգրէսի գու-մարումը բացարձակ անհրաժեշտութիւն լինելով՝ մենք անդուլ ջանքով այդ ուղղութեամբ կաշխատենք:

Ն Ո Ւ Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ի

Պարսկաստանի Հնչակեան Մանածիւղերի Գործադիր Յանձնախմբի գանձարանում ստացուել են՝ 1906 Սեպ. 11-ից 1907 Մարտ 1-ը հետևեալ գումարները.

Մարտի Մ.դ-ից, Մամիկոնեանի միջոցաւ՝ 500, Լեոնց եղբայր-ներինց նւէր՝ 2000, Անդրօսիկ Ժ-ից՝ 1000, Եղբայրներ ոմս՝ 500, ոմս 2-ից՝ 750, Զ. Բ-ից՝ 500, Բ. Ս. ոմս՝ 300, Եղբ. Բ-ից՝ 300, Միւսի լուս. ծախ Էսգէլի՝ 42, Ոմանք Ա, 500, ոմս Կամիւրայից՝ 200, ԲԺ-ից՝ 10, Գ. Մ. Ա-ից՝ 5, Ն. Տ. Օ-ից՝ 10, Ատրպ. կեղրոն. Մամածիւղից՝ 583 ղո. 60 կոպ. Նասալիօսից՝ (5 օսմ. ոսկի) 242 ղո. 50 կոպ., 1906 Դեկ. 27-ի նեկայացումից՝ 1047 ղո., 1906 Սեպ. 11-ի Մալաթի-գեււ խմբի ընտանե-կան երկնայից՝ 300 ղո., 1907 Մարտ 1-ի ներկայացումից՝ 950 ղո., ընկեր շառայից նւէր՝ 150 ղո.: Գումարն է՝ 9892 ղո. 10 կոպէկ:

Նակ՝ ճայիս ամսում ստացուել են.—
Ընգէլի մ-նից նախագահի միջոցով 1000 ղոան, Համատանի ըն-կերներինց՝ Թ. Գրիգորեանի միջոցով՝ 500, Մարաղայի Լամա-ժիւղից՝ ընկեր Արծրունու միջոցով՝ 200, Մաշնադարանի մ-նից 500: Գումար 2,200 ղոան:

Ատրպատականի Հնչակեան կեդ. Մ-դի գանձարանում ստ-ացուել են՝ 1906 Մարտ 16-ից 1906 Սեպ. 16-ը.
Ա. Տ-Կ-եանից նւէր՝ 20, Ստ. Ե-եանից՝ 100, Աղ. Մ. Միւ-ից՝ 20, Արմ. եւ ընկ. ից՝ 12, Հասոյից՝ 100, Գ. Միւ-ից՝ 50, «Կայծակ» խմբից՝ 40, Բարաշանից՝ Մէրի Գերեզմանաքարի նւ. 50, Միւ. Տ-Ման-ից՝ 30 Սեկ. Բ-եանից 50, Երկաթից՝ 50, Ա. Տ-Կ-ից՝ 20, Վաղ. Զար-ից՝ 30, Հ. Մց. Միւից՝ 30, Սիմոնի տան Խնչոյից՝ 26, Մարաղի Մամածիւ-ղից՝ 300, «Մուրաւ», խմբից՝ 30 ղոն.: Գումարն է՝ 958 ղոան:

Սպանաթի շրջ. Հնչ. Մ-դի գանձարանում ստացուել են, 1906 Մայիսից 1907 Յուն. 2-ը՝ հետևեալ գումարները.

Արարատ խմբի խմբապետ Վազգէլից՝ 44, «Կայծակ» խմբից՝ 35, Մարաշի խմբի «Մուրէն» խմբից՝ 74, Լալապալի «Կայծակ» խմբից՝ 72, Տէր-Կարից՝ 29, Ջաղ-Գրիգորից՝ 10, Կարապետից՝ 8, Կար. Բաղդից՝ 14, Խօյի «Մուրաղ» «Մասուն», «Զէյթուն» եւ «Արծիւ» խմբերից՝ անգամ 137, Խօյի նոյն խմբից ք. անգամ 70, Փայաշուկի ոմսից՝ 40, Մամ. Բ-եանից նւէր՝ 100, Մա. Մէկ Յակոբեանից՝ 100, Մալ Օսան-եանից՝ 100, Եւանգալից՝ 50, Խաչ-Խաչ-ից՝ 80, Մտ. Սարի՝ 60, Առ. Եաթ. 50, Աւագ, քնիաթ 80, Հաս Մանակ 150, Խոյ. Փէթէից՝ 100, Խոյ Սիզբէթ՝ 30, Խոյ. Սերոբ՝ 8, Փայաշուկում 1907 Յուն. 1-ի ներկայա-ցումից՝ 300 ղոան: Գումարն է՝ 1791 ղոան:

Մարաղայի Հնչ. Տ-դի գանձարանում ստացուել են 1906 Հոկ. 20-ից 1907 Փետր. 20-ը.

Նուէրներ. Եղբայր Թումանեանի՝ 70, Բեգ Նազարեանից՝ 30, Յար. Յովսէփեանից՝ 20, ոմս՝ 10, Ար. Մ. Անդրէասեանից՝ 30, Թում. Խուտապետեանից՝ 80, Մարգ. Մ-Բաւալեանից՝ 20, Յար. Բարաւ-եանից՝ 10, Համ. Օրտուխանեանից՝ 10, Մեկը. Սարգօսեանից՝ 10, Կրտ. Բէգլարեանից՝ 50, Գր. Բարոյեանից՝ 40, Ա. եւ Մ. Աղաբէ-գեանից՝ 30, Մարգ. Տ. Յակոբեանից՝ 30, Աս. Մարգարեանից՝ 30, Ծս. Եսայեանից՝ 30, Աս. Վարդանեանից՝ 30: գումար 560 ղոան:

1906 Թուի Անդամավճարներ.՝ Խոտրոկից՝ 24 ղո. 25 կոպ. «Մար-տիկ» խմբի անդամներից՝ Բալբաստեանից՝ 12, Հալիւտից՝ 12, Կալ Վահանից՝ 12, Որոտից՝ 12, Ժառից՝ 6, Սերոբ փաշայից՝ 2, Կարգէ-նից՝ 6, Կամարակեանից՝ 4, Մայիսուայ ներկայացման Բուֆէտից՝ 10, 25, Օգոստոսի Բուֆէտից՝ 15, 15, գումար 91 ղո. 40 կոպ.: «Ժի-րար» խմբից, —Ատտեւիկից՝ 8, Գործից՝ 2, Ղեկծից՝ 5, Կործից՝ 5 ղո գումար 64 ղո:

«Սագունի» խմբի 1905 Թ. Դեկտ. ի ամսավճար 14 ղո. 50 կոպ., նոյն խմբից 1906 Թուի անդամավճար՝ 75 ղո. 65կ. Գումար 90, 15: Կ. Բէգլարեանից՝ 1907 Թուի Անդամավճար՝ 50 ղոան: Ընդ. գումար 879 ղոան 80 կոպէկ:

ՊՈՒԳՐԷՇԻ ճամնաճիւղի գանձարանում ստացուել են, 1906 յունիս 1-էն՝ մինչև 1907 ապրիլ 1-ը.

Ամսավճարներ՝ 102 Ֆրանք, վիճակահանութիւնէ գուտ շահ՝ 290, 50, վիճակահանութեան առթիւ Կ. Բ-եանէ նուէր՝ 10, վիճակահա-նութեան առթիւ Գ. Բ-եանէ՝ 5, պատկերներն էրէ 58: «Շաքէ» տիկնանց խմբէն — Կայծակ 5 Ֆրանք, Վարդ՝ 2, Ար-ւարդս՝ 2, Լուսին՝ 4, Կրակ՝ 3, Սուր՝ 2, վեհափառ՝ 2, Մատանի՝ 3 Ժիւճանս՝ 2, Մասիս՝ 2: «Արար» տիկնանց խմբէն — Փամիւրշտ՝ 5, Լոյսնակ՝ 2, Կարկուտ՝ 2, Անձրեւ՝ 1, Թնթանօթ՝ 1, քար՝ 1, Ասող՝ 3, Ոչխար՝ 2, Մատիտ՝ 2, Հաֆսէ՝ 1, Ֆրանք:

Պատկերներու առթիւ՝ նուէր 5 Ֆրանք: Գումար 530, Ֆրանք

ՆՈՐ-ՆԱԻԱՀԱՆԳՍԻ մ-դի գանձարանում ստացուել են, 1906-ից մինչև 1907-ը:

Լոտոի երկնայից անամին արդիւնք՝ 10, Եղբայր Եգիպտացի-նիցի տարեկանը՝ 50, Յարիցի խմբի «Արածանի» խմբից՝ նուէր եւ անդամավճարներ՝ 54, 85, Բաւալեանի «Բարգրատունեան» խմբից նուէր 4՝ 5, Բաղաբի «Պատանի Հայաստան» խմբից՝ 1907 Թ յունիս, փետր., մարտ, ապրիլ եւ մայիս ամսավճարները՝ ուրիշը Մեկընեանից՝ 1, 3, Յակոբ Կրակից՝ 1, 25, Նորածինից՝ 1, 30, Կէօճէկից 1 ր., Տիգրանի՝ 45 կ., Արտաշէսից՝ 80, Միւրունից՝ 60 Կործից՝ 15, Անդրանիկից՝ 45, Հակից՝ 40, Վարդի՝ 95, Հրաչէաի՝ 50, Ընկերի՝ 50 Կրակի՝ 20, Եւանդի՝ 10, Տիգրանի՝ 20, Նորածինի՝ 20, Հայկի՝ 10: Ընկ. վարչակաւի Թ. 4 տօմարի հաշուի՝ 3, 12, Ն. Արամեա-նի Ի հաշիւ պատկերների 1 ր. 70 կ.: Ընդ. գումար 135 ր. 70 կ.:

Ստացել ենք Արեքսանդրիա հրատարակուած «Ենի-Ֆիքր» (Նոր Իսթաբուլ) անունով ասճիկերէն մի թերթ, որուն հաս-ցէն հետևեալն է. Journal Yeni-fikr. Poste restante Alexandrie (Egypte)

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ գանձարանում ստացուել են հետևեալ գումարները. —

ԴՍՏ- ՍԷՆԹ ԼՈՒԻՋՐ Մ-ՂԷՆ	—	24	եւ կէս անգլ. ոսկի
Մուրաւ	—	—	1314 Ֆ.
Ա.-Շ.	—	—	36 "
Մարաթէն	—	—	10 "
Վիէննայէն ոմս	—	—	3 "
Մ. Հ. եւ Գօտէլիէն ընկ. Մ. ձեռամբ Ի Նպաստ	—	—	10 տ.
քաղաքական բանտի.	—	—	—
Ասերիկ. Գործ. Յանձնախմբէն	—	—	39 տ. 60 ս.
ԹՐՈՅԻ մ-ղէն	—	—	50 " — "

M. BELLART — 7, Rue Campagne-Première 7, (France) PARIS. Imprimeur-Gérant EMILE LEBÉE